Պատիժը կանխավ

հեղինակ՝ Վիլիամ Թեն
թարգմանիչ՝ Ջ. Ղազարյան (ռուսերենից)
աղբյուր՝ «Աստղային կարուսել»

Նյոո Յորքի տիեզերակայանում բանտային տիեզերաթիռի վայրէջքից արդեն քսան րոպե հետո թղթակիցներին թույլ տվին նավ բարձրանալ: Նրանք փոթորկող հորձանքով ներխուժեցին գլխավոր միջանցքը, պատերին սեղմելով մինչեւ ատամները զինված հսկիչներին, որոնք նրանց պիտի առաջնորդեին: Առջեւից սլանում էին լրագրողները եւ տեսաբանները, իսկ հորձանքը եզրափակում էին հեռուստատեսային օպերատորները, նզովքներ փնթփնթալով իրենց դյուրակիր, բայց եւ այնպես ծանր սարքավորման հասցեին:

Չդանդաղեցնելով վազքը, թղթակիցները շրջանցում էին գալակտիկական բանտային ծառայության սեւ-կարմիր համազգեստով տիեզերագնացներին, որոնք արագ քայլերով գալիս էին նրանց ընդառաջ, շտապելով ոչ մի րոպե բաց չթողնել իրենց հասանելիք մոլորակային արձակուրդից. չէ որ հինգ օր հետո տիեզերաթիռը, աքսորականների նոր բեռով, կգնա հերթական ռեյսի:

Թղթակիցները մի հայացքի անգամ չարժանացրին այդ անգույն սուբյեկտներին, ում գոյությունը սպառվում էր գալակտիկայի մի ծայրից մյուսը միօրինակ ուղերթով: Եվ հետո, նրանց կյանքն այնքա՛ն շատ էր նկարագրվել, որ այդ թեման վաղուց արդեն քամված էր մինչեւ վերջին կաթիլը: Ո՛չ, սենսացիոն նյութը սպասում էր նրանց առջեւում:

Նավի խոր փորում հսկիչները բացեցին վիթխարի դռան փեղկերը եւ մի կողմ թռան, վախենալով, որ իրենց ոտքի տակ կգցեն եւ կտրորեն: Թղթակիցները բառացիորեն կախվեցին երկաթե վանդակի ճաղերից, որոնք շրջափակում էին վիթխարի խուցը: Նրանց ագահ հայացքները այս ու այն կողմ էին նետվում խուցով մեկ, բախվելով գորշ կոմբինեզոններով մարդկանց աչքերի սառն անտարբերությանը եւ երբեմն միայն հետաքրքրությանը: Այդ մարդիկ պառկած կամ նստած էին մահիճների վրա, որոնք շարք-շարք, հարկ-հարկ տրտում ձգվում էին խուցի ողջ երկայնքով:

Գորշազգեստ մարդկանցից յուրաքանչյուրը ձեռքում պինդ բռնել էր հասարակ թղթից սարքված մի փաթեթ, իսկ ոմանք էլ քնքշորեն շոյում էին այն: Ավագ հսկիչը, ատամների միջից փորփրելով նախաճաշի մնացորդները, ներսի կողմից դանդաղ մոտեցավ ճաղերին:

— Բարեւ, տղերք,— ասաց նա:— Այդ ո՞ւմ եք փնտրում: Ես չեմ կարո՞ղ ձեզ օգնել:

Ոչ ջահել եւ առավել հայտնի լրագրողներից մեկը նախազգուշացնող տեսքով բարձրացրեց մատը:

— Թողեք ձեր կատակները, Անդերսոն: Տիեզերաթիռը կես ժամ ուշացումով վայրէջք կատարեց, ու մի քսան րոպե էլ մեզ սպասեցրին սանդուղքի մոտ: Որտե՞ղ են նրանք, գրողը տանի:

Անդերսոնը մի քանի վայրկյան նայում էր, թե օպերատորները ինչպես են իրենց արմունկներով տեղ նվաճում վանդակաճաղերի մոտ: Հետո նա ատամի միջից հանեց մսի վերջին կտորը:

— Լեշակերներ,— փնթփնթաց նա։— Սատկած մսի որսորդներ, արնախումներ։

Այնուհետեւ ճարպկորեն ձեռքն առնելով մահակը, ավագ հսկիչը սկսեց խփել վանդակի ճաղերին։

— Քրենդո՛լ,— փնչացրեց նա։— Հե՛նք։ Առա՛ջ եւ կենտրո՛ն։

Հսկիչները, որոնք մահակները խաղացնելով անշտապ քայլում էին բազմահարկ մահիճների միջեւ, կրկնեցին հրամանը։

— Քրենդո՛լ։ Հենք։ Առա՛ջ եւ դեպի կենտրո՛ն։

Նրանց ձայները դեսուդեն էին նետվում խցով մեկ, ռիկոշետով ետ թռչելով վիթխարի կամարներից։

Նկլաս Քրենդոլը նստեց, ոտքերը ծալելով հինգերորդ հարկի իմ մահճի վրա եւ ջղայնացած կնճռոտեց դեմքը։ Նա ոնց որ սկսել էր ննջել եւ հիմա տրորում էր հազիվ բացվող աչքերը։ Նրա դաստակի ներսի կողմից երեւում էին երեք կարմիա զուգահեռ սպիներ՝ երեք ուղիղ ակոսներ, որ կարող է թողնել գիշատիչ գազանի ճիրանավոր թաթը։

Ունքերի վերեւում մաշկը հատում էր եւս մեկ սպիի մուգ կեռը։ Իսկ ձախ ականջի բլթակի վրա սեւին էր տալիս կլոր անցքը։ Աչքերը տրորելուց հետո նա ջղայնացած քորեց այդ ականջը։

— Հանդիսավոր դիմավորում,— փնթփնթաց նա։— Նախօրոք կարելի էր գլխի ընկնել։ Դարձյալ անիծյալ Երկիրն է իր բոլոր հմայքներով։

Քրենդոլը շրջվեց փորի վրա եւ ձեռքով թփթփացրեց իր տակի դարակի խռմփացնող նիհարիկ մարդու այտին։

— Օտտո,— ձայն տվեց նա,— Օտտո-Բլոտտո, վեր կաց։

Հենքը, աչքերը դեռ չբացած, իսկույն վեր թռավ ու նստեց, ոտքերը ծալեց տակը։ Նրա աջ ձեռքը ձգվեց դեպի վիզը, որը ծածկված էր զիգզագանման, Քրենդոլի ճակատի սպիի գույնի եւ մեծության սպիների ցանցով։ Ձեռքի երկու մատները չկային՝ ցուցամատն ու միջնամատը։

— Հենքն այստեղ է, սըր,— խռպոտ ասաց նա, թափահարեց գլուխը եւ, աչքերը բացելով, նայեց Քրենդոլին։— Ա՛, դո՞ւ ես, Նիկ… Ի՞նչ է եղել։

— Մենք տեղ ենք հասել, Օտտո-Բլոտտո։ Մենք Երկրի վրա ենք, եւ շուտով պատրաստ կլինեն մեր վկայականները։ Եվս մի կես ժամ, ու դու կկարողանաս սիրտդ ուզածի չափ կոնյակ, գարեջուր, օղի ու անիծյալ վիսկի խմել։ Դու էլ ստիպված չես լինի մտնել մահճի տակ եւ պահածոյի բանկայով խմել բանտային ինքնաքաշ օղին, Օտտո-Բլոտտո։

Հենքը փնչացրեց եւ ետ ընկավ մեջքի վրա։

— Կե՛ս ժամ հետո։ Իսկ ինչո՞ւ ինձ հիմա արթնացրիր, ինչ է, ես քեզ համար գրպանահա՞տ եմ, որը նախ գողանում է, հետո նստում ու հիմա անհամբերությունից ղժժում, թե որտեղ է իր վկայականը։ Իսկ ես, Նիկ, երազումս տեսա մի նոր ձեւ, որով կսպանեմ Էլզային, էնպե՛ս բան է, որ կշշմես…

— Շները կատաղել են,— առաջվա պես հանգիստ պատասխանեց Քրենդոլը։

— Լսո՞ւմ ես: Նրանց մենք ենք պետք՝ դու եւ ես:

Հենքը նորից նստեց, ականջ դրեց ու գլխով արեց:

Ինչո՞ւ այսպիսի ձայն ունենում են միայն գալակտիկական շները, հը՞:

— Համաձայն հրահանգի,— հավաստիացրեց նրան Քրենդոլը:— Գալակտիկական շուն դառնալու համար պահանջվում է առավելագույն հասակ, նվազագույն կրթություն եւ առավելագույն զզվելի ձայն, որ ընդունակ լինի խլացուցիչ գոռալում: Իսկ առանց դրա, ինչպիսի նողկալի սրիկա էլ որ լինես, եղբայրս, ստիպված պիտի լինես նստել Երկրում եւ սիրտդ թեթեւացնել՝ տուգանելով իրենց անդրջրհեղեղյան ուռռաթիռներով արագությունը գերազանցող պատվարժան պառառներին:

Հսկիչը մոտեցավ նրանց ու զայրացած խփեց մետաղե ձողին:

— Քրենդո՛լ: Հե՛նք: Դուք դեռ աքսորական եք, մի մոռացեք: Երկու վայրկյան եմ տալիս ձեզ, թե չէ կբարձրանամ ու մի լավ կմշակեմ, որ չմոռանաք:

— Կա, սըր: Գալիս եմ, սըր,— արձագանքեցին նրանք միաձայն եւ սկսեցին ցած իջնել, ձեռներից բաց չթողնելով փաթեթները, որոնց մեջ իրենց հագուստներն էին, այն հագուստները, որ մի ժամանակ հագնում էին ազատության մեջ եւ հիմա նորից պիտի հագնեին:

— Լսիր, Օտտո,— արագ-արագ խոսեց Քրենդոլը անձայն բանտային շշուկով, կռանալով Հենքի ականջի վրա, մինչ ցած կիջնեին:— Մեզ կանչում են ինտերվյուի հեռուստատեսության գրչակների ու լրագրողների հետ: Մեզ հարյուրավոր հարցեր կտան: Տես, հա, բերանիցդ բաց չթողնես…

— Լրագրողնե՞ր… Իսկ ինչո՞ւ մեզ… Ինչնեի՞ն ենք պետք:

— Որովհետեւ մենք նշանավոր մարդիկ ենք, ավանակ: Մենք չեղած տեղը նստել ենք ողջ ժամկետը: Իսկ քո կարծիքով, շա՞տ կան մեզ նման: Ձայնդ կտրիր ու լսիր: Եթե քեզ հարցնեն, թե դու ում ես մտադիր սպանել, լռիր ու ժպտա: Այդ հարցին մի պատասխանիր: Հասկացար: Բերանիցդ չթռցնես, թե ում սպանության համար էիր նստած: Ոնց էլ որ քեզ կպնեն, նրանք չեն կարող ստիպել քեզ, որ պատասխանես: Օրենքն է այդպիսին:

Հենքը մի պահ քարացավ:

— Նիկ: Ախր Էլզան գիտի: Ես հենց այն օրը նրան ասացի, մինչեւ ոստիկանություն գնալս: Նա հրաշալի գիտի, որ ես համաձայնվեցի սպանության համար նստել միայն հանուն իրեն:

— Նա գիտի՛, նա գիտի՛: Դե, իհարկե, նա գիտի:— Քրենդոլն արագ ու անձայն հայհոյեց:— Բայց նա չի կարող դա ապարուցել, դմբո: Իսկ հենց որ դու այդ մասին հայտարարես վկաների ներկայությամբ, նա իրավունք կստանա զենք ձեռք բերելու եւ առանց նախազգուշացնելու կրակել քեզ վրա՝ ինքնապաշտպանության կարգով: Իսկ եթե դու լռես, նա դրա իրավունքը չի ունենա: Չէ որ մինչեւ հիմա նա քո խեղճ կինն է, որին դու աստծո առաջ երդվել ես սիրել, հարգել ու գուրգուրել: Ամբողջ աշխարհի տեսանկյունից…

Հսկիչը բարձրացավ ոտքի թաթերի վրա ու մահակը շրմփացրեց նրանց մեջքներին: Նրանք ընկան հատակին ու կծկվեցին, իսկ հսկիչը ոռնում էր:

— Ես ձեզ թողե՞լ եմ ռեխներդ բացեք: Թողե՞լ եմ: Եթե մեզ ժամանակ մնա, մինչեւ ձեր վկայականները տալը, ես ձեզ, խելոքներիդ, կտանեմ հսկիչների սենյակը վերջին անգամ դաս տալու: Իսկ հիմա՝ արագացրե՛ք:

Նրանք հնազանդորեն վազեցին, ինչպես հավի ճտերը փախչում են կատաղած շնից: Խուցը շրջափակող ճաղերի մոտ հսկիչը պատվի առավ եւ զեկուցեց.

— Կանխահանցագործներ Նիկլաս Քրենդոլ եւ Օտտո Հենք, սըր:

Ավագ հսկիչ Անդերսոնը ի պատասխան ձեռքն անփութորեն տարավ դեպի գլխարկը եւ շրջվեց բանտարկյալների կողմը:

— Այս պարոնները ուզում են ձեզ հարցեր տալ, տղերք, մի երկու հարց: Պատասխանեք. դրանից ձեզ վնաս չի լինի: Կարող եք գնալ, Օ'Բրայեն:

Ավագ հսկիչի ձայնը հնչում էր մեծազույն բարեհոգությամբ: Նրա դեմքին խաղում էր կիսատ ժպիտը:

Հսկիչ Օ'Բրայենը նորից պատվի առավ եւ մի կողմ գնաց, իսկ Քրենդոլը մտովի վերհիշեց այն ամենը, ինչ հասցրել էր Անդերսոնի մասին իմանալ Կենտավրոսի Պրոքսիմայից մինչեւ այստեղ թռչելու մեկ ամսվա ընթացքում: Անդերսոնը մտախոհ օրորում էր գլուխը, երբ այդ խեղճ Մինելիին… նրա անունը Ստիվ Մինելի էր… քշեցին մահակներով զինված հսկիչների շարքի միջով այն բանի համար, որ նա առանց թույլտվության գնացել էր զուգարան: Անդերսոնը քրքջում էր եւ ոտքով խփում էր աքսորականի աճուկներին, որը ճաշի ժամանակ խոսել էր հարեւանի հետ… Անդերսոնը…

Ավ, այնուամենայնիվ, չի կարելի ժխտել նրա քաջությունը. չէ որ նա գիտեր, որ նավի վրա գտնվում են երկու կանխահանցագործ, որոնք կանխավ կրել են իրենց պատիժը սպանության համար: Այսինքն, նա հաստատ կիմանար եւ այն, որ նրանք իրենց սպանությունները հենց այնպես չեեն վատնի իր վրա, որքան էլ որ ինքը գազանություններ անի: Մարդը կամավոր կերպով երկար ժամանակով դժոխք չի գնում սոսկ այն բանի համար, որ սատկացնի տեղի հրեշներից մեկին:

— Իսկ մենք պարտավո՞ր ենք պատասխանել այդ հարցերին, սըր,— զգուշորեն հարցրեց Քրենդոլը:

Ավագ հսկիչի ժպիտը մի քիչ նեղացավ:

— Ես արդեն ասացի, չէ, որ դա ձեզ վնաս չի տա: Իսկ մի ուրիշ բան կարող է եւ խանգարել: Այնպես որ Քրենդոլ, դեռ ինչ ասես կարող է լինել: Ես կցանկանայի ծառայություն մատուցել մամուլի ներկայացուցիչներին, եւ դուք, խնդրեմ, եղեք սիրալիր ու բարեհաճ, լա՞վ,— նա կզակը թեթեւակի թեքեց հսկիչների կողմը եւ ձեռքն առավ մահակը:

— Կա, սըր,— պատասխանեց Քրենդոլը, իսկ Հենքը եռանդագին գլխով արեց:— Մենք կլինենք սիրալիր եւ բարեհաճ:

«Գրողը տանի,— մտքում հայհոյեց Քրենդոլը:— Եթե միայն այդ սպանությունը ինձ այդքա՛ն հարկավոր չլիներ մեկ ուրիշի համար: Հիշիր Ստեֆանսոնին, բարեկամս, միայն Ստեֆանսոնին: Ոչ մի Անդերսոն, ոչ մի Օ'Բրայեն եւ ոչ այլ ոք: Միայն Ֆրեդերիկ Սթոդարդ Ստեֆանսոն»:

Մինչ հեռուստատեսության օպերատորները վանդակաճաղերի մյուս կողմում տեղադրում էին իրենց խցերը, Քրենդոլը եւ Հենքը պատասխանում էին թղթակիցների նախնական սովորական հարցերին:

— Դե, ինչպե՞ս եք ձեզ զգում Երկիր վերադառնալուց հետո:

— Հրաշալի: Ուղղակի հրաշալի:

— Ի՞նչ եք մտադիր անել, հենց որ վկայականները ստանաք:

— Կարգին ուտել: (*Քրենդոլ*):

— Հարբել: (*Հենք*):

— Զգույշ եղեք, որ հանկարծ նորից բանտ չընկնեք՝ այս անգամ որպես ետհանցագործներ: (Մի թղթակից):

Ընդհանուր բարեհոգի ծիծաղ, որին իրենց լուման են ներդնում ավագ հսկիչ Անդերսոնը եւ Քրենդոլն ու Հենքը:

— Ինչպես էին ձեզ հետ վարվում բանտարկության ժամանակ:

— Շատ լավ: (*Քրենդոլն ու Հենքը միաձայն, մտախոհ ծուռ-ծուռ նայեցին Անդերսոնի մահակին*): — Իսկ դուք չեք ուզում մեզ հայտնել, թե ո՞ւմ եք մտադիր սպանել: Գուցե ձեզնից որեւէ մեկը կասի՞:

(*Լռություն:*)

— Ձեզնից որեւէ մեկը միտքը չի՞ փոխել եւ չի՞ հրաժարվել սպանությունից:

(*Քրենդոլը մտախոհ նայում է առաստաղին: Հենքը մտախոհ նայում է հատակին: Նորից ընդհանուր ծիծաղ, որի մեջ այս անգամ փոքր-ինչ լարվածություն կա: Քրենդոլն ու Հենքը չեն ծիծաղում*):

— Դե, մենք պատրաստ ենք: Այս կողմը, խնդրեմ, շրջվեք,— միջամտեց հեռուստատեսության հաղորդավարը:— Եվ ժպտացեք, մեզ հարկավոր է իսկական փայլուն ժպիտ:

Քրենդոլը եւ Հենքը հնազանդորեն ժպտացին մինչեւ ականջները, եւ հաղորդավարը նույնիսկ երեք ժպիտ ստացավ. Անդերսոնը չհապաղեց միանալ ժպիտից փայլով զույգին:

Օպերատորների ձեռքերից դուրս թռան երկու խցիկ, մեկը կախվեց բանտարկյալների գլխավերեւում, մյուսը արագ-արագ ետ ու առաջ շարժվեց նրանց դեմքերի դիմաց. օպերատորները այդ խցիկնրե էեկավարում էին ափի մեջ տեղավորվող փոքրիկ պուլտերի օգնությամբ: Խցիկներից մեկի օբյեկտիվի վերեւում վառվեց կարմիր լամպը:

— Եվ այսպես, հարգելի հեռուստադիտողներ եւ հեռուստադիտողուհիներ,— թավշյա ձայնով որոտաց հաղորդավարը,— մենք ձեզ հետ միասին գտնվում ենք «Ժան Վալժան» բանտային տիեզերաթիռում, որը հենց նոր վայրէջք կատարեց Նյու Յորքի տեիզերակայանում: Մենք եկել ենք այստեղ, որ ծանոթանանք երկու մարդու՝ այն հազվադեպ մարդկանց կատեգորիային պատկանող երկու մարդու հետ, որոնք կամավոր կերպով կրելով մարդասպանության համար նախատեսված ժամկետով պատիժը, ստացան օրինական կերպով յուրաքանչյուրը մեկ սպանություն կատարելու իրավունք: Մի քանի րոպե հետո նրանք ազատված կլինեն, լրիվ յոթը տարի աքսորամոլորակներում

բանտարկությունը կրելուց հետո, ազատված կլինեն Արեգակնային համակարգի սահմաններում ցանկացած տղամարդուն կամ կնոջը սպանելու իրավունքով: Լավ նայեցեք նրանց դեմքերին, սիրելի հեռուստադիտողներ եւ հեռուստադիտողուհիներ, չէ որ կարող է պատահվել, որ նրանք կընտրեն հատկապես ձեզ:

Այսպիսի լավատեսական ակնարկից հետո հաղորդավարը մի փոքր դադար տվեց, եւ օբյեկտիվները գամվեցին բանտային գորշ հագուստով երկու տղամարդկանց դեմքերին: Այնուհետեւ հաղորդավարը մտավ խցիկների տեսադաշտը եւ դիմեց բանտարկյալներից կարճահասակին:

— Ձեր անո՞ւնը, սըր:

— Կանխահանցագործ Օտտո Հենք, հինգ հարյուր քսանհինգ հինգ հարյուր տասնչորս համար,— սովորականի պես վրա տվեց Օտտո-Բլոտտոն, չնայած «սըր» բառը մի քիչ շփոթեցրեց նրան:

— Ինչպե՞ս եք ձեզ զգում Երկիր վերադառնալով:

— Հրաշալի: Ուղղակի հրաշալի:

— Ի՞նչ եք մտադիր անմիջապես անել, հենց որ վկայականը ստանաք:

Հենքը մի փոքր լուռ տատանվեց, հետո երկչոտ նայեց Քրենդոլի կողմը եւ պատասխանեց.

— Մի կարգին ուտել:

— Ինչպես էին ձեզ հետ վարվում, երբ դուք բանտարկված էիք:

— Շատ լավ: Այնպես լավ, ինչպես որ պետք էր սպասել:

— Ինչպես որ կարող էր սպասել հանցագործը, հը՞: Բայց չէ որ դուք դեռ հանցագործ չեք, ճի՞շտ է: Դուք չէ որ կանխահանցագործ եք:

Հենքն այնպես ժպտաց, ասես առաջին անգամ էր լսում այդ բնորոշումը:

— Ճիշտ է, սըր, ես կանխահանցագործ եմ:

— Չէի՞ք ցանկանա հեռուստադիտողներին հայտնել, թե ով է այն անձնավորությունը, որի պատճառով դուք պատրաստ եք հանցագործ դառնալ: Հենքը նախատինքով նայեց հաղորդավարին, որը արձակեց մի հյութեղ քմծիծաղ, այս անգամ լրիվ մեն-մենակ:

— Կամ, գուցե, դուք հրաժարվե՞լ եմ ձեր մտադրությունից:

Տիրեց լռություն, եւ հաղորդավարը փոքր-ինչ ջղայն ասաց.

— Դուք յոթը տարի պատիժ եք կրել վտանգներով լի եւ դեռեւս չյուրացված մոլորակներում, նախապատրաստելով դրանք մարդու բնակության համար: Դա առավելագույն ժամկետն է, որ նախատեսված է օրենքով, ճի՞շտ է:

— Այո, սըր: Պատիժը նախապես կրող կանխահանցագործներին յոթ տարուց ավելի չեն տալիս մադասպանության համար:

— Գրազ կգամ, դուք ուրախ եմք, որ մեր օրերում մահապատիժը վերացված է, չէ՞: Այսինքն, այդ դեպքում պատիժը կանխավ կրելն իմաստ չէր ունենա, այդպե՞ս չէ: Իսկ այժմ, միսթր Հենք, թե՞ ես դեռ պիտի ձեզ կանխահանցագործ Հենք կոչեմ, գուցե դուք մեր

հեռուստադիտողներին պատմեք, թե պատիժը կրելու տարիներին ձեզ հետ կատարված ո՞ր դեպքն եք համարում ամենասոսկալին:

— Ը… ը…— Հենքը մտքիեր մեջ ընկավ:— Ամենավատը, թերեւս, պատահեց Անթարես VIII-ի րվա, իմ երկրորդ ճամբարում, երբ խոշոր կրետները սկսեցին ձու դնել… Գիտե՞ք, Անթարես VIII-ի վրա մի այնպիսի կրետ կա, որ հարյուր անգամ մեծ է…

— Այնտեղ էլ դուք կորցրիք ձեր երկու մա՞տը:

Հենքը վեր բարձրացրեց հաշմված ձեռքը եւ ուշադիր զննեց այն:

— Ոչ: Ցուցամատիցս զրկվել եմ Ռիգել XII-ի վրա: Մենք կառուցում էինք այդ մոլորակում առաջին ճամբարը, ու ես փորեցի հանեցի մի տարօրինակ կարմիր փշփշոտ կայծքար: Դե ես մատս կպցրի, որ տեսնեմ, շա՞տ պինդ է՝ ու մատիս ծայրը միանգամից անհետացավ: Ճրըմփ՝ ու չկա: Իսկ հետո ամբողջ մատս թարախակալեց, եւ բժիշկներկ կտրեցին ու դեն շպրտեցին: Իմ բախտը հալա բերեց: Տղերքից, այսինքն՝ աքսորականներից ոմանք դեմ էին առել ավելի խոշոր այդպիսի քարերի ու որը ոտքից էր զրկվել, որը ձեռքից, իսկ մեկին էլ լրիվ կուլ էին տվել: Ախր դրանք իրականում ոչ թե քարեր էին, այլ կենդանի արարածներ, կենդանի եւ սոված: Դրանք ուղղակի վխտում էին Ռիգել XII-ի վրա: Դե, իսկ միջամատս… Միջամատս կորցրել եմ իմ հիմարության պատճառով տիեզերաթիռի մեջ, երբ տեղափոխում էին…

Հաղորդավարը ամեն ինչ հասկացողի տեսքով գլխով ացեց, հազաց եւ ասաց.

— Բայց կրետները, Անթարես VIII-ի վիթխարի կրետները ամենավատն էին…

Օտտո-Բլոտտոն միանգամից գլխի չընկավ, թե խոսքն ինչի մասին է, եւ շփոթված թարթեց աչքերը:

— Հա… Դա ճիշտ է: Նրանք ձուկ են դնում Անթարես VIII-ի վրա ապրող կապիկների մաշկի տակ, հասկանո՞ւմ եք: Կապիկները, իհարկե, դրանից շատ են նեղվում, իսկ կրետի թրթուրները կեր են ունենում մինչեւ մեծանալը: Դե, մենք այնտեղ հիմնավորվեցինք, եւ բանից դուրս եկավ, որ կրետները ոչ մի տերբերություն չեն տեսնում այդ կապիկների եւ մարդկանց միջեւ: Սկզբում ամեն ինչ լավ էր գնում, իսկ հետո հանկարծ մերթ մեկն էր անզգա շրմփում գետնին, մերթ մյուսը: Դրանց տարան հիվանդանոց, ռենտգեն արեցին, եւ պարզվեց, որ նրանք ուղղակի լցոնված են…

— Շնորհակալություն, միսթր Հենք, բայց մեր հեռուստադիտողները արդեն ավելի քան երեք անգամ տեսել են Հերքմիրի կրետին եւ լսել են նրա մասին «Միջաստղային թռիչք» հաղորդման ժամանակ: Այդ ծրագիրը, ինչպես դուք, անկասկած հիշում եք, թանկագին հեռուստադիտողներ, հաղորդվում է չորեքշաբթի օրերը միջերկրային ժամանակով տասնիններից մինչեւ տասնինն անց երեսուն: Իսկ այժմ, միսթր Քրենդոլ, թույլ տվեք հարցնել ձեզ, սըր, ինչպես եք զգում Երկիր վերադառնալով:

Քրենդոլն առաջ եկավ եւ ենթարկվեց մոտավորապես նույնպիսի հարցաքննության, ինչպես իր ընկերը:

Ի դեպ, տեղի ունեցավ բավական նշանակալի շեղում շաբլոնից: Հաղորդավարը հարցրեց, թե նա չի՞ կարծում, որ այդ ժամանակաընթացքում Երկիրը խիստ փոխված կլինի: Քրենդոլն արդեն ուզում էր ուսերը թոծվել, հետո հանկարծ քմծիծաղ տվեց:

— Մի նշանակալի փոփոխություն տեսնում եմ,— ասաց նա։— Օդում սավառնող այս խցիկները, որոնք ղեկավարում են փոքրիկ տուփեցի միջոցով։ Այն օրը, երբ ես բաժանվեցի Երկրից, այդպիսի բան դեռ չկար, գյուտարարը, երեւի հիմար մարդ չէ։

— Հը՞,— հաղորդավարը նայեց շուրջը։— Դուք խոսում եք Ստեֆանսոնի դիստանցիոնային փոխարկիչի մասին։ Դա հայտնագործել է Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոնը մի հինգ տարի առաջ։ Ճի՞շտ է, Դոն։

— Վեց տարի,— ճշտեր օպերատորը։— Հինգ տարի առաջ փոխարկիչը սկսեց վաճառվել։

— Փոխարկիչի գյուտը կատարվել է վեց տարի առաջ,— բացատրեց հաղորդավարը։— Իսկ վաճառքը սկսվել է հինգ տարի առաջ։

Քրենդոլը գլխով արեց։

— Այդ Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոնը, երեւում է, շատ խելոք մարդ է, շա՛տ-շա՛տ խելոք,— եւ նորից քմծիծաղեց խցիկի օբյեկտիվի մեջ։

«Նայիր ինձ վրա,— մտածեց նա։— Ես հո գիտեմ, որ դու նայում ես այս հաղորդումը, Ֆրեդի։ Նայից ինձ վրա եւ դողա»։

Հաղորդավարը կարծես մի քիչ շշմել էր։

— Այո…— ասաց նա։— Ճիշտ այդպես։ Իսկ այժմ, միսթր Քրենդոլ, չէ՞իք պատմք ձեզ հետ պատահած ամենասոսկալի…

Երբ հեռուստատեսության օպերատորները հավաքեցին իրենց սարքավորումները եւ գնացին, թղթակիրները հարցերի վերջին տարափը տեղացին երկու կանխահանցագործների վրա, հույս ունենալով, թե մի արտառոց հետաքրքիր բան կկորզեն նրանցից։

«Կնոջ դերը ձեր կյանքում», «Ձեր սիրած գրքերը, ձեր հոբին, ձեր սիրած զբաղմունքը», «Աքսորամոլորակներում դուք հանդիպե՞լ եք աթեիստների», «Եթե ձեզ վիճակված լիներ ամեն ինչ սկսել նորից…»

Նիկլավ Քրենդոլը պատասխանում էր հարգալից եւ ձանձրույթով, իսկ ինքը մտածում էր Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոնի մասին, որն այժմ նստած է իր շքեղ, ամբողջ պատը բռնած էկրանով հեռուստացույցի առաջ։

Կամ գուցե Ստեֆանսոնն արդեն անջատե՞լ է հեռուստացույցը։ Գուցե նա այժմ նստած է, հայացքը հառած մարած էկրանին, եւ ճգնում է գլխի ընկնել այն մարդու մտադրությունը, որ կենդանի է մնացել, չնայած ըստ վիճակագրական տվյալների, նա կենդանի մնալու մեկ շանս ուներ տասը հազարից, եւ վերադարձել է Երկիր, յոթը անհավանական տարի պատիժ կրելով չորս աքսորամոլորակների ճամբարներում…

Իսկ գուցե Ստեֆանսոնը, շրթունքները կծելով, ձեռքում պտտեցնում է իր բլաստերը, բլաստեր, որը գործի դնել չի վիճակվի նրան։ Չէ որ եթե անառարկելիորեն չապացուցվի, որ նա սպանել է չանցնելով անհրաժեշտ պաշտպանության սահմանները, մարդասպանության համար կդատապարտվի լրիվ պատժի ժամկետով, առանց զեղչելու այն յոթ տարիները, որ հանում են կամավոր կերպով կանխավ պատիժ կրողներից։ Եվ նա

իրեն տասնչորս տարի կդատապարտի ապրելու ահավոր դժոխքում, որտեղից հենց նոր վերադարձել է Քրենդոլը:

Բայց կարող է եւ պատահել, որ Ստեֆանսոնը կծկված նստել է թանկարժեք պնեւմատիկ բազկաթոռի մեջ եւ մռայլված նայում է չանջատված հեռուստացույցի էկրանին՝ սարսափից քարացած եւ, այնուամենայնիվ, անզոր անջատվելու հետաքրքրաշարժ հաղորդումից, որը հեռուստատեսային ընկերությունը պատրաստել է երկու (հապա մի պատկերացրեք՝ երկու) կանխահանցագործների վերադառնալու կապակցությամբ, կանխահանցագործներ, որոնք նախապես կրել են իրենց պատիժը սպանության համար:

Այժմ, երեւի, հարցազրույց է հաղորդում գալակտիկական բանտային ծառայության մի որեւէ երկրային ներկայացուցչի հետ, մամուլի հետ կապի բաժնի պետի հետ, որը շատ վարժ օգտագործում է սոցիոլոգիական տերմիններ:

«Ասացեք, միսթր Իմյարեկ,— կսկսի հաղորդավարը (*մի ուրիշ հաղորդավար, ավելի պատկառելի եւ ավելի կիրթ*),— հաճա՞խ են կանխահանցագործները լրիվ կրում սպանության համար նախատեսված ժամկետով իրենց պատիժը եւ վերադառնում Երկիր»:

«Վիճակագրական տվյալները,— այս բառերն ուղեկցվում են թղթի շրշյունով եւ դեպի ցած ուղղված կենտրոնացած հայացքով,— վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ սպանության համար կանխավ պատիժը կրած կանխահանցագործը Երկիր վերադառնում է տասնմեկ եւ յոթ տասնորդական տարին մեկ անգամ միայն»:

«Ուրեմն, միսթր Իմյարեկ, կարելի է ասել, որ երկու այդպիսի մարդկանց վերադարձը նույն օրը բավական արտառոց իրադարձություն է»:

«Բավական արտառոց, այլապես դուք, հեռուստատեսության աշխատողներդ, այսքան աղմուկ չէիք բարձրացնի»:(*Ծիծաղ, որին հարգալից մասնակցում է նաեւ հաղորդավարը*):

«Իսկ ի՞նչ է տեղի ունենում նրանց հետ, ովքեր չեն վերադառնում, միսթր Իմյարեկ»:

(*Փափկիկ ձեռքի նրբագեղ թափահարում*):

«Նրանք կործանվում են: Կամ էլ հրաժարվում են իրենց մտադրությունից: Կատակ բան չէ յոթ տարի մնալ աքսորամոլորակներում: Այնտեղ աշխատանքը փափկասունների համար չէ, եթե արդեն չխոսենք տեղական կենդանի օրգանիզմների՝ ինչպես խոշոր, մարդակերների մասին, այնպես էլ պստլիկ վիրուսանմանների մասին: Ահա թե ինչու են բանտային ծառայողներն այդքան բարձր աշխատավարձ եւ այդքան երկարատեւ արձակուրդ ստանում: Որոշ իմաստով, մենք բոլորովին էլ չենք վերացրել մահապատիժը, այլ սոսկ փոխարինել ենք հասարակայնորեն անհրաժեշտ բախտախաղի նման ինչ-որ բանով: Յուրաքանչյուր մարդ, որը կատարել է կամ մտադիր է կատարել առանձնապես վտանգավոր հանցագործություններից որեւէ մեկը, աքսորվում է մի այնպիսի մոլորակ, որտեղ նրա աշխատանքը օգուտ է բերում մարդկությանը եւ որտեղ նա չունի հարյուր տոկոսանոց երաշխիք, թե կվերադառնա Երկիր՝ թեկուզեւ հաշմանդամ դարձած: Որքան լուրջ է հանցագործությունը, այնքան երկար է պատժի ժամկետը, եւ հետեւաբար այնքան քիչ է վերադառնալու հնարագորությունը»:

«Այ թե ինչ: Բայց, միսթր Իմյարեկ, դուք ասացիք, որ նրանք կամ զոհվում են, կամ հրաժարվում իրենց մտադրությունից: Արդյոք բարի չէի՞ք լինի բացատրելու մեր

հեռուստադիտողներին, ինչո՞վ է արտահայտվում նրանց հրաժարվելը եւ ինչ է այդ դեպքում տեղի ունենում»:

Միսթր Իմյարեկը ետ է ընկնում բազկաթոռի մեջ եւ փափլիկ մատները իրար հյուսած դնում կլոր փորին:

«Ամեն մի կանխահանցագործ իրավունք ունի դիմելու ճամբարի պետին՝ իրեն անմիջապես ազատելու խնդրանքով, որի համար բավական է լրացնել համապատասխան բլանկը: Այդ մարդուն անմիջապես հանում են աշխատանքներից եւ առաջին իսկ նավով ուղարկում Երկիր: Բայց բանն այն է, որ պատժի ժամկետի արդեն կրած մասը լրիվ չեղյալ է համարվում, եւ նա ոչ մի փոխհատուցում չի ստանում: Եթե ազատություն ստանալուց հետո նա հանցանք է գործում, ապա հասանելիք պատիժը պետք է լրիվ կրի: Եթե նա նորից ցանկություն է հայտնում պատիժը կանխավ կրել, ապա կրում է լրիվ: Յուրաքանչյուր չորս կանխահանցագործներից երեքը առաջին իսկ տարում ազատման խնդրագիր են ներկայացնում: Այդ մոլորակները շատ շուտ են ձանձրացնում»:

«Այո, այո, ես էլ եմ կարծում,— համաձայնվում է հաղորդավարը:— Բայց մենք կուզենայնք ձեր կարծիքն իմանալ կանխահանցագործին հասնող պատժի կրճատ ժամկետի մասին: Չէ որ շատերը, ինչպես ձեզ հայտնի է, պատժի ժամկետի կիսով չափ կրճատումը համարում են չափազանց գայթակղիչ եւ հանցագործության աղբյուր»:

Բարետես, փափկասուն դեմքին հազիվ որսալի չար արտահայտություն է հայտնվում, որ իսկույն փոխվում է մեծամիտ-արհամարհական քմծիծաղով:

«Վախենում եմ, որ թեեւ այդ մարդիկ առաջնորդվում են ամենալավագույն մղումներով, բայց այնքան էլ տեղյակ չեն ժամանակակից քրեագիտության եւ պենոլոգիայի հարցերին: Մենք բնավ էլ չենք ձգտում պակասեցնել կանխահանցագործների թիվը, այլ ձգտում ենք ավելացնել:

Դուք հիշո՞ւմ եք, ես ասացի, որ չորսից երեքը ազատման խնդրագիր են տալիս առաջին իսկ տարում: Այդ անհատները բավական խելամիտ էին եւ փորձում էին կրել պատժի ժամկետի միայն կեսը, որ հասնում էր նրանց հանցանգործության դիմաց: Արդյո՞ք նրանք այնքան հիմար կլինեն, որ, այնուամենայնիվ, կդիմեն հանցավործության՝ գիտենալով, որ կստանան լրիվ ժամկետով պատիժ, երբ արդեն համոզվել են, որ աքսորավայրում չեն կարող դիմանալ նույնիսկ տասներկու ամիս: Եթե չասենք արդեն այն մասին, որ նրանք, ովքեր կենդանի են մնում այդ մոլորակներում, գոյության պայքարի վիճակախաղում հաղթատոմս շահած այդ հատուկետն երջանիկները գործնականում ըմբռնում են մարդկային կյանքի արժեքը, սոցիալական համագործակցության անհրաժեշտությունը եւ քաղաքակիրթ մեթոդների առավելությունը:

Իսկ նա, որ չի խնդրում ազատվե՞լ: Դե, նա էլ բավական ժամանակ ունի, որպեսզի լրիվ հրաժարվի մտահղացած հանցանքը գործելու ցանկությունից, եթե անտեսենք այն մեծ հավանականությունը, որ նա կզոհվի եւ ոչնչի չի հասնի: Այսպիսով, վերադարձող եւ հանցագործություն կատարող կանխահանցագործների թիվը այնքան քիչ է, որ հասարակությունը դրանից մեծապես շահում է: Թույլ տվեք, բերել մի քանի թվեր: Ըստ Լազարեսի սանդղակի գնահատումը ցույց է տալիս, որ կանխահանցագործների համար կես պատիժ սահմանելու ժամանակից ի վեր միայն դիտավորյալ սպանությունների թիվը նվազել է 41 %-ով Երկրի համար, 33 %-ով Վեներայի համար, 27 %…»

«Վատ, շատ վատ մխիթարություն կլինեն Ստեֆանսոնի համար այդ 41 %-ը եւ 33 ⅓ %-ը,— գոհունակությամբ մտածեց Նիկլաս Քրենդոլը: Նա ինքը հաշվառված էր այդ վիճակագրական տվյալների մյուս այունակում՝ մարդ, որը բավականաչափ ծանրակշիռ պատճառով ուզում է սպանել ոմն Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոնի: Նա մնացորդ էր հանումների եւ մարումների էջում՝ հակառակ հավանականության, նա վերադարձել է յոթ տարի աքսորում մնալուց հետո, որպեսզի ստանա ապրանքը, որի համար կանխիկ էր վճարել:

Նա եւ Հենքը: Անհեթեթության չափ փոքր շանսի երկու մարմնացում: Հենքի կինը, Էլզան… Գուցե նա էլ է նստած իր հեռուստացույցի առաջ՝ ինչպես օձի հայացքից քարացած թռչուն, բութ հուսահատությամբ հույս ունենալով, որ Գալակտիկական բանտային ծառայությամն ներկայացուցչի բացատրությունները կհուշեն իրեն, թե ինչպես խուսափի անխուսափելիից, ինչպես փրկվի իրեն վիճակված այդչափ հազվադեպ ճակատագրից:

Ի դեպ, Էլզայի մասին թող Օտտո-Բլոտտոն մտածի: Թող ուրախանա, նա շատ թանկ է վճարել այդ իրավունքի համար: Իսկ Ստեֆանսոնը պատկանում է իրե՛ն, Քրենդոլի՛ն:

«Ես ուզում եմ, որ այդ լողլող սրիկան ինչպես հարկն է քրտնի վախից, ես կսպասեմ իմ ժամին, եւ թող նա վախից դողա»:

Թղթակիցները շարունակում էին հարցաքննությունը, բայց ահա նրանց գլխավերեւում բարձրախոսը հազաց եւ հայտարարեց.

«Բանտարկյալներ, պատրաստվեք դուրս գալու: Առաջին տասնյակը հավաքվում է եւ գնում է նավի պետի գրասենյակը: Կարգապահության բոլոր կանոնները պահպանվում են մինչեւ վերջ: Կանչվում են՝ Արթուր, Աուգյուկ, Գարֆինկել, Հոմես, Գրեհիմ, Քրենդոլ, Ֆեոստա, Ֆու-Չեն, Հենք…»

Կես ժամ հետո արդեն իրենց հին քաղաքական հագուստներով նրանք գնում էին կենտրոնական միջանցքով դեպի սանդուղքը: Ելքի մոտ նրանք վկայականը ներկայացրին ժամապահին, մեքենայաբար հաճոյանալով ժպտացին Անդերսոնին, երբ նա իլյումինատորի մեջ գոռաց. «Հեյ, տղերք, շուտ վերադարձեք», եւ վազելով իջան այն մոլորակի մակերեւույթին, որը չէին տեսել յոթ տանջալից տարիներ:

Ելքի մոտ նրանց դարձյալ սպասում էին թղթակիցներն ու լուսանկարիչները, ինչպես նաեւ հեռուստատեսության օպերատորը, որին հանձնարարված էր աշխարհին ցույց տալ նրանց՝ ազատության առաջին րոպեներին:

Հարցեր, հարցեր, բայց այժմ նրանք կարող էին իրենց թույլ տալ լինել չոր ու կտրուկ, չնայած դեռ դժվարանում էին կոպիտ պատասխանել որեւէ մեկին, բացի իրենց բանտարկյալ ընկերներից:

Բարեբախտաբար, թղթակիցների ուշադրությունը շեղեց երրորդ կանխահանցագործը, որ քայլում էր նրանց կողքից: Ֆյու-Յենը կրել էր երկու տարվա իր պատիժը (հաշվանցումով)՝ մարմնական վնասվածքներ հասցնող ծեծի համար: Նա զրկվել էր երկու ձեռից եւ մեկ ոտքից՝ Պռոցիոն III-ի թունավոր քարաքոսների մեջ աշխատելիս, ազատվելուց ընդամենը մեկ ամիս առաջ, եւ այժմ կաղեկաղ դանդաղ իջնում էր կամրջակով՝ հենվելով առողջ մտքի եւ պրոտեզի վրա. բազրիքից բռնել չէր կարող:

Երբ թղթակիրներն անկեղծ հետաքրքրությամբ սկսեցին հարցուփորձ անել, թե նա ինչպես պետք է ծեծի իր զոհին, այն էլ մարմնական վնասվածքներ հասցնելով՝ այսպիսի խիստ սահմանափակ հնարավորություններով, Քրելդոլը արմունկով հրեց Հենքին, ու նրանք արագ նստեցին մոտակա գիրոտաքսին եւ վարորդին խնդրեցին տանել մի որեւէ խաղաղ ու ոչ թանկ բար:

Ընտրության լրիվ ազատությունը շշմեցրեց Օտտո-Բլոտտոյին:

— Նիկ, ես չեմ կարող,— շշնջաց նա:— Այս ինչիա՞ն շատ խմելու բան կա:

Քրենդոլը ազատեց նրան դժվարությունից, պատվիրելով եւ իր, եւ նրա համար:

Երկու կրկնակի վիսկի,— ասաց նա մատուցողուհուն:— Եվ ուրիշ ոչինչ:

Երբ վիսկին բերեցին, Օտտո-Բլոտտոն թախծոտ, շվարած քնքշանքով լի հայացքը գամեց բաժակին. այդպես նայում է հայրը իր պատանի զավակին, որին վերջին անգամ տեսել է ծծկեր հասակում: Նա դողդոջուն ձեռքը զգույշ մեկնեց դեպի բաժակը:

— Մա՛հ մեր թշնամիներին,— ասաց Քրենդոլը եւ, միանգամից խմելով վիսկին, նայեց, թե Օտտո-Բլոտտոն ինչպես է դանդաղ ըմպում, վայելելով յուրաքանչյուր կաթիլը:

— Շատ չոգեւորվես,— զգուշացրեց նա:— Թե չէ Էլզան չի էլ նկատի քո վերադարձը, գուցե թե միայն ընդունելության օրերին ծաղիկներ տանի հարբեցողների հիվանդանոցը:

— Կարող ես չանհանգստանալ,— փնթփնթաց Օտտո-Բլոտտոն իր դատարկ բաժակի մեջ:— Ես մորս կաթի հետ ծծել եմ այս թույնը: Եվ ընդհանրապես էլ չեմ խմի, մինչեւ նրա հաշիվը չփակեմ: Ես այդպես էլ որոշել էի, Նիկ, մեկ բաժակ՝ ազատությունը նշելու համար, հետո՝ Էլզան: Ես այս յոթ տարին չդիմացա նրա համար, որ սեփական սխալիս պատճառով ընկնեմ հիմար վիճակի մեջ:

Հենքը բաժակը դրեց սեղանին:

— Յոթ տարի մերթ մի սոսկալի դժոխքում, մերթ՝ մյուս: Իսկ մինչեւ այդ՝ տասներկու տարի Էլզայի հետ: Տասներկու տարի նա կերել է իմ հոգին, ծաղրելով նայում էր աչքերիս մեջ եւ ասում, որ ինքը օրենքով իմ կինն է, որ ես պարտավոր եմ նրան պահել եւ պիտի պահեմ, թե չէ ավելի վատ օրի կընկնեմ: Իսկ հենց որ ես դադարում էի սողալ նրա առաջ, նա իսկույն առիթ էր գտնում ինձ բանտ մտցնելու: Հետո մի երկու ամիս անց դատավորին ասում էր, որ ես, երեւի, քելքի եմ եկել, ու ինքը պատրաստ է ինձ ներելու: Ես ծնկաչոք խնդրում էի նրան ապահարզան տալ, ոտքերն ընկած աղաչում-պաղատում էի,— մենք երեխաներ չունենք, նա առողջ է, ջահել, իսկ նա միայն ծիծաղում էր երեսիս: Իսկ երբ ուզում էր բանտ գցել, դատավորի մոտ լաց էր լինում, իրեն կոտորում, բայց հենց որ մենակ էինք մնում, քրքջում էր, նայելով, թե ես ինչպես եմ տառապում: Ես նրան պահում էի, Նիկ: Ամբողջը տալիս էի նրան, ինչ-որ վաստակում էի, մինչեւ վերջին ցենտը, բայց դա քիչ էր համարում: Նրան դուր էր գալիս նայել, թե ես ինչպես եմ ջղաձգվում, նա ինքն այդպես ասաց ինձ: Իսկ հիմա ջղաձգվելու հերթը իրենն է:— Ու, փնչացնելով, ավելացրեց.— Միայն հիմարներն են ամուսնանում:

Քրենդոլը դուրս նայեց պատուհանից, որի մոտ նստած էր: Այնտեղ, ցած իջնող մազում մակարդակների վրա եռում էր Նյու Յորքի սովորական կյանքը:

— Գուցե,— մտախոհ ասաց նա։— Չեմ վիճում։ Մենք երջանիկ ամուսիններ էինք, քանի դեռ միասին էինք՝ ամբողջ հինգ տարի։ Իսկ հետո հանկարծ երջանկությունն անհետացավ, ասես հօդս ցնդեց։

— Համենայն դեպս, նա քեզ ապահարզան տվեց,— նկատեց Հենքը։— Ոչ թե վզիցդ կախ ընկավ։

— Օ, Պոլլին այն կանանցից չէ, որ կախ են ընկնում սրա-նրա վզից։ Ես նրա անունը դրել էի Սքանչելի Պոլլի, իսկ նա իմ անունը դրել էր Մեծ Նիկ։ Իսկ հետո աստղի փայլը խամրեց, դե գուցե ես էլ… Այն ժամանակ ես դեռ կաշվիցս դուրս էի գալիս, որ իմ ու Իրվի ֆիրման շահությբեր լինի։ Էլեկտրոնային սարքավորումների մեծածախ վաճառք։ Դե, իհարկե, դժվար չէր հասկանալ, որ ինձանից միլիոնատեր չի ստացվի։ Հնարավոր է, որ ամեն ինչի պատճառը դա էր։ Բայց ինչեւիցե, Պոլլին որոշեց հեռանալ ինձանից, եւ ես չպահեցի նրան։ Մենք բարեկամաբար բաժանվեցինք։ Ես հաճախ եմ մտածում, որ նամ հիմա…

Լսվեց թրխկոց, որը նման էր ջրի ծփանքի (ասես փոկը մաշկաթաթով խփեց ջրին»։ Քրենդոլը նայեց սեղանին, որտեղ բաժակների արանքում ընկել էր ճզմված փուչիկը։ Նույն պահին Հենքը բռնեց փուչիկն ու դուրս նետեց պատուհանից։ Օդի մեջ գալարվեցին երկար կանաչ թելերը, բայց փուչիկն արդեն վայր էր ընկնում վիթխարի շենքի պատի երկայնքով, եւ շուրջը չկար կենդանի էակ, որին թելերը կարող էին փաթաթվել։

Քրենդոլն աչքի պոչով հասցրեց նկատել, որ մի մարդ արագ դուրս վազեց բարից։ Կասկած չկար, որ նա էր փուչիկը գցել։ Մյուս այցելուները ահաբեկված նայում էին նրա հետեւից ու ապա շրջվում իրենց սեղանի կողմը։ Ստեֆանսոնը, հավանաբար, որոշել էր, որ հարկավոր է լրտեսել Քրելդոլին եւ վնասազերծել։

Օտտո-Բլոտտոն չսկսեց պարծենալ իր արագ ռեակցիայով։ Երկուսն էլ վաղուց սովորել էին ակնթարթաբար գործել՝ ուրիշների մահերը բավական օգտակար դաս էին եղել նրանց։ Եվ Հենքը միայն ասաց.

— Խատուտիք ռումբ Վենեայից։ Դե, Նիկ, համենայն դեպս այդ տիպը չի ուզում քեզ սպանի։ Ուզում է միայն հաշմանդամ դարձնի։

— Այո, դա նման է Ստեֆանսոնին,— համաձայնվեց Քրենդոլը, երբ փակելով հաշիվը, նրանք ուղղվեցին դեպի դուռը, իսկ չորս կողմը նստած մարդկանց դեմքերը դեռ գունատ էին։— Նա ինքը այդ բանը չէր անի։ Մարդ կվարձեր դրա համար։ Եվ կվարձեր միջնորդի միջոցով, համենայն դեպս զգուշանալով, որ նա կարող է ընկնել ոստիկանության ձեռքը եւ բերանից թոցնելլ։ Բայց դա էլ կլիներ մեծ ռիսկ. արդեն գործած սպանության մեջ մեղադրվելը բնավ նրա սրտովը չէր լինի։ Ու դրա համար էլ մտածել է՝ խատուտիկ ռումբի մի ոչ մեթ դոզա՝ ու ես արդեն անվտանգ կդառնամ իր համար։ Հնարավոր է, որ նա նույնիսկ կայցելեր ինձ անփուժելի հիվանդների ապաստարանում։ Չէ որ ծննդյան տոներին յոթ տարի շարունակ բացիկներ էր ուղարկում ինձ։ Եվ միշտ նույնը։ «Դեռ բարկանո՞ւմ ես։ Ողջո՛ւյն, Ֆրեդի»։

— Այդ քո Ստեֆամսոնի խելքը տեղն է,— ասաց Օտտո-Բլոտտոն, ուշադիր նայեց չորս կողմը եւ դրանից հետո նոր դուրս եկավ տասնհինգերորդ մակարդակի մայթը։

— Մի բան էլ ավելի։ Նա աշխարհը պահում է բռի մեջ եւ ժամանակ առ ժամանակ բռունցքն ավելի ուժեղ է սեղմում, հենց այնպես, հաճույքի համար։ Ես նրա մեթոդներին ծանոթացել եմ դեռ ուսանողական տարիներից, երբ մենք միային ապրում էինք

հանրակացարանի նույն սենյակում, բայց կարծում ես, թե դա որեւէ չափով օգնե՞ց ինձ: Ես պատահաբար հանդիպեցի նրան, երբ իմ ու Իրվի ֆիրման վերջին շունչն էր փչում, Պոլլիից բաժանվելուց երկու տարի հետո: Ես ինձ շատ վատ էի զգում եւ ուզում էի սիրտս բացել մեկնումեկի առաջ ու պատմեցի նրան, որ գործընկերս դողում է ամեն մի գրոշի համար, իսկ ես օդային ամրոցներ եմ կառուցում, ու մենք երկուսս էլ հաստատ սնանկության կհասցնենք ֆիրման, որը կարող էր ոսկու հոր լինել: Իսկ հետո ես հասա նաեւ իմ դիստանցիոն փոխարկիչին ու ասացի, որ շատ կուզեի լրջորեն զբաղվել դրանով, բայց ոչ մի կերպ ժամանակ չեմ գտնում:

Օտտո-Բլոտտոն անընդհատ շուրջն էր նայում անհանգիստ, ոչ թե նոր հարձակումից վախենալով, այլ նրան շփոթեցնում էր ազատ քայլելու հնարավորությունը: Մարդիկ կանգ էին առնում եւ նայում մինչեւ ծնկները հասնող նրանց հնաձեւ պարեգոտներին:

— Այդպես ուրեմն,— շարունակում էր Քրենդոլը:— Իհարկե, ես ինձ հիմարի տեղ դրի, բայց հավատա, Օտտո, դու նույնիսկ չես պատկերացնում, թե Ֆրեդիի նման մարդիկ ոնց են կարողանում բարեկամ ձեւանալ: Նա ինձ ասաց, որ ամառանոց ունի, բայց հիմա այնտեղ չի ապրում, իսկ նկուղում սարքել է էլեկտրոնային լաբորատորիա նորագույն սարքավորումներով: Եվ եթե ես ցանկանամ, ապա հաջորդ շաբաթից նա լրիվ ինձ կտրամադրի եւ տունը, եւ լաբորատորիան: Միայն իմ ուտելու մասին ինքս պիտի մտածեմ: Նա ոչ մի վարձ չի ուզում, դա անում է հանուն հին բարեկամության եւ մեկ էլ այն պատճառով, որ չի ուզում, որ ես մանրանամ, այլ ստեղծեմ իսկապես մեծ, արժեքավոր բան: Դե, ասա, ինչպես կարող էի դրան դիմանալ: Եվ միայն երկու տարի հետո գլխի ընկա, որ նա այդ նկուղում լաբորատոր սարքավորումները տեղադրել էր մեր խոսակցությունից հետո, այն ժամանակ, երբ ես Իրվին առաջարկեցի երկու հարյուրով գնել իմ բաժինը մեր ֆիրմայում: Եվ, ընդհանրապես, Ստեֆանսոնի՝ մակլերական գրասենյակի տիրոջ, ինչին էր պետք էլեկտրոնային լաբորատորիան, բայց նման բաների մասին չես մտածում, երբ հին ընկերդ քո նկատմամբ այդպիսի ջերմ վերաբերմունք է ցուցաբերում:

Օտտոն հոգոց հանեց եւ շարունակեց.

— Դեհ, նա գրեթե ամեն շաբաթ այցելում էր քեզ, իսկ երբ քո նոր սարքը սկսեց աշխատել, նա դուռը շրխկացրեց քթիդ առաջ, իսկ քո բոլոր գծագրերն ու պատրաստի սարքը տարավ հայտնի չէ ուր: Իսկ քեզ էլ ասաց, որ այն կպատենտավորի ավելի շուտ, քան դու կհասցնես վերականգնել թեկուզ մեկ գծագիր: Եվ ախր չէ որ դու նրա տանն էիր աշխատում: Եվ նա կկարողանա ապացուցել, որ ինքն է քեզ դրամով օժանդակել: Ու ծիծաղեց երեսիդ, ճիշտ ինչպես Էլզան: Չէ՞, Նիկ:

Քրենդոլը կծեց շրթունքը, հանկարծ հասկանալով, որ Օտտո Հենքն անգիր գիտի այդ պատմությունը: Քանի՛ անգամ են նրանք իրար հետ կիսել վրիժառության իրենց պլանները եւ իրար պատմել, թե ինչն է իրենց բերել աքսոր: Քանի՛ անգամ է նրանցից յուրաքանչյուրը կրկնել իր դառն պատմությունը, եւ ընկերն ասել է կարեկցանքի նույն խոսքերը, նույն ձեւով համաձայնվել է եւ նույնիսկ նույն ձեւով առարկել:

Հանկարծ Քրենդոլն ուզեց ազատվել Օտտո-Բլոտտոյի ներկայությունից եւ վայելել մենակության երանությունը: Երկու մակարդակ ներքեւ նա տեսավ հյուրանոցի շողշողացող տանիքը:

— Ես գնում եմ այնտեղ: Արդեն ժամանակն է մտածել գիշերելու մասին:

Օտտոն գլխով արեց, հասկանալով, թե ինչն էր այդպիսի հանկարծակի որոշման պատճառը:

— Գնա: Ես քեզ հասկանում եմ: Բայց դա շա՞տ չի լինի, Նիկ: «Այծեղջյուր—Ռիտց»: Օրը տասներկու թղթադրամից ոչ պակաս:

— Հետո ի՞նչ: Մի շաբաթ ես կարող եմ վայելել: Իսկ երբ գրպաններս դատարկվեն, ես իմ կենսագրությամբ շատ հեշտությամբ կարող եմ լավ աշխատանք գտնել: Ես այսօր փոխություն եմ ուզում, Օտտո-Բլոտտո:

— Դե լավ, լավ: Դու իմ հասցեն ունես, չէ, Նիկ: Ես հորեղբորս տղայի մոտ կլինեմ:

— Այո, ունեմ: Դեհ, հաջողություն քեզ, Էլզայի հաշվով, Օտտո:

Շնորհակալություն: Հաջողություն՝ Ֆրեդիի հաշվով: Դե, առայժմ:

Օտտո-Բլոտտոն կտրուկ շրջվեց եւ մտավ վերելակ: Երբ նրա հետեւից դռները փակվեցին, Քրենդոլը հանկարծ տխրեց: Հենքն այժմ հարազատ եղբորից էլ մոտ էր նրա համար: Չէ որ իրենք այս վերջին տարիների ընթացքում գիշեր-ցերեկ միասին էին: Իսկ Դենին ինքը չի տեսել… ինչքան կլինի… հա, մոտավորապես ինը տարի:

Եվ հանկարծ Քրենդոլն զգաց, թե իրականում որքան քիչ կապեր ունի մարդկանց երկրի հետ, եթե հաշվի չառնենք Ֆրեդ Ստեֆանսոնին այդ աշխարհից վերացնելու բացասական ցանկությունը: Թերեւս, այժմ նրան կին էր հարկավոր, եւ գրեթե միեւնույն է, թե ինչ կին:

Ոչ, նրան ավելի շատ հարկավոր է բոլորովին այլ բան՝ եւ չի կարելի ժամանակ կորցնել:

Նա արագ քայլեց դեպի մոտակա դեղատունը, որը շատ մեծ էր եւ շքեղ: Ցուցափեղկի կենտրոնում նա միանգամից տեսավ այն, ինչ հարկավոր էր իրեն:

Մոտենալով վաճառասեղանին, Քրենդոլը հարցրեց վաճառողին.

— Ինչ-որ շատ էժան է: Հո խոտանվա՞ծ չի:

Վաճառողը պատասխանեց վիրավորված արժանապատվությամբ:

— Նախքան ապրանքը վաճառելը, սըր, մենք այն ենթարկում ենք մանրազնին ստուգման: Իսկ գինն այդքան ցածր է, որովհետեւ մենք Արեգակնային համակարգի ամենախոշոր մեծավաճառ ֆիրման ենք:

Դե լավ, տվեք միջին կալիբրի մեկ հատ: Եվ երկու տուփ փամփուշտ:

Բլաստերը դնելով գրպանը, Քրենդոլն իրեն ավելի հանգիստ զգաց: Նա միանգամայն համոզված էր, որ հարկ եղած պահին կկարողանա մի կողմ ցատկել, խուսափել հակահարվածից. այս վստահությունը նրա մեջ դաստիարակել էին երկար տարիները, երբ նա ամեն վայրկյան ստիպված էր լինում զգուշանալ կայծակնային ռեակցիա ունեցող գիշատիչ արարածների հարձակումից: Սակայն միշտ էլ հաճելի է, երբ հնարավորություն ունես հարվածին հարվածով պատասխանելու: Եվ հետո Ստեֆանսոնն ինքն էլ չի ուշացնի հաջորդ փորձը:

Հյուրանոցում Քրենդոլը կեղծ ազգանուն ասաց. այդ խորամանկությունը նրա մտքովն անցավ ամենավերջին պահին: «Կարող էր եւ բոլորովին չանցնել,— մտածեց նա, երբ վերելակավարը գրպանը դնելով նրա նվիրած փողը, ասաց.

— Շնորհակալություն, միսթր Քրենդոլ: Ցանկանում եմ հաջողություն ձեր զոհին սպանելու գործում, սըր:

Եվ այսպես, ինքը նշանավոր մարդ է: Հնարավոր է, որ ամբողջ աշխարհը ճանաչում է իր դեմքը: Թերեւս, այդ պատճառով հեշտ չի լինի Ստեֆանսոնին բռնացնելը:

Մինչեւ լողարան մտնելը, Քրենդոլը հեռատեղեկատու բյուրոյից տեղեկություններ խնդրեց Ստեֆանսոնի մասին: Արդեն յութ տարի առաջ Ստեֆանսոնը բավական հարուստ եւ գործնական շրջաններում լայնորեն հայտնի մարդ էր: Իսկ այժմ, Ստեֆանսոնյան (սատանան տանի, ստֆանսոնյան) փոխարկիչի շնորհիվ նա, հավանաբար, ավելի է հարստացել եւ ավելի մեծ ճանաչում է ստացել:

Այդպես էլ կար: Հեռուստացույցը հայտնեց, որ վերջին օրացուցային ամսվա ընթացքում Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոնի մասին բյուրոն ստացել է տասնվեց ձայնագրություն: Քրենդոլը մի քիչ մտածեց եւ խնդրեց, որ իր համար միացնեն վերջինը: Այն թվագցված էր այդ օրը: «Ֆրեդերիկ Ստեֆանսոնը, Ստեֆանսոնյան խնայողական բանկի եւ Ստեֆանսոնյան ոլեկտրոնային կորպորացիայի պրեզնդենտը, այսօր վաղ առավոտյան մեկնեց Հիմալայան իր փոքրիկ որսորդական տնակը: Նա մտադիր է այնտեղ մնալ ոչ պակաս…»

— Բավական է,— գոռաց Քրենդոլը լողարանից:

Ուրեմն, վախենում է Ստեֆանսոնը: Լողլող ավազակը վախից խելքը թռցնում է: Դա արդեն քիչ չէ: Յոթ տարվա աքսորի ոչ վատ տոկոսը: Թող մի լավ քրտին այնտեղ, որպեսզի մահը, երբ նրանք վերջապես իրար հետ կփակեն հաշիվները, մեծ թեթեւություն թվա նրան:

Քրենդոլը պատվիրեց վերջին լուրեր եւ հաճույքով լսեց վերջին նորություններն իր իսկ մասին, որ ինքը ապրում է «Այծեղջյուր-Ռիտց» հյուրանոցում Ալեքսանդր Սմեյզերս անվան տակ: «Սակայն այդ երկու անուններն էլ՝ Քրենդոլ եւ Սմեզերս, ճիշտ չեն,— ճառում էր անտարբեր ձայնագրությունը:— Այդ մարդն ունի սոսկ մեկ իսկական անուն, եւ այդ անունը Մահ է: Այո, այսօր «Այծեղջյուր-Ռիտց» հյուրանոցում բնակվել է Կենաց հնձվորը, եւ սոսկ միայն նա ինքը գիտի, թե մեզանից ում չէ վիճակված տեսնել նոր արեւածագը: Այդ մարդը, մարդկային կյանքի այդ հնձվորը, Մահվան այդ ավետաբերը միակն է մեր մեջ, ում հայտնի է…»

— Սկվիր,— կատաղած գոռաց Քրենդոլթ: Այս յոթ տարիների ընթացքում նա լրիվ մոռացել էր, թե ազատ մարդը ինչ տանջանքներ է կրում անտրտունջ:

Հեռուստացույցի էկրանի վրա առկայծեց մասնավոր հեռուստատեսային կանչի ազդանշանը: Քրենդոլն արագ սրբվեց, հագնվեց եւ հարցրեց.

— Ո՞վ է:

— Միսիս Նիկլաս Քրենդոլը,— պատասխանեց հեռուստավարուհու ձայնը:

Քրենդոլը ապշահար հայացքը գամեց էկրանին:

Պոլլի՛: Որտեղից հանկարծ հայտնվեց: Եվ ինչպես իմացավ, թե որտեղ կարելի է իրեն գտնել: Այսինքն, վերջին հարցին դժվար չէր պատասխանելը. չէ որ ինքը հռչակավոր մարդ է:

Պոլլիի դեմքը գրավեց ամբողջ էկրանը: Քրենդոլը, մի փոքր ժպտալով, ուշադիր զննում էր այն: Պոլլին մի քիչ պառավել էր, բայց երեւի կնճիռները կարելի է նկատել միայն այսքան խոշորացնելու հետեւանքով:

Եվ կարծես Պոլլին էլ դա գլխի ընկավ, համենայն դեպս պտտեցրեց բռնակը, եւ նրա դեմքը փոքրացավ, դարձավ նորմալ չափի. այժմ նա երեւում էր ոտից-գլուխ: Ըստ երեւույթին, Պոլլին տնից էր զանգահարում: Սենյակը այնպիսի տեսք ուներ, ինչպես կահավորված վարձու բնակարանների բոլոր հույրասենյակները, բայց դրա փոխարեն՝ ինքը, Պոլլին, հրաշալի տեսք ուներ եւ շատ հաճելի էր նրան նայելը: Քրենդոլի սիրտը ջերմացավ հիշողություններից…

— Պոլլի: Բարեւ: Ի՞նչ է պատահել: Չէի սպասում, որ քեզ կտեսնեմ:

— Բարեւ, Նիկ,— նա ձեռքը տարավ դեպի բերանը եւ մի քանի վայրկյան լուռ նայեց նրան, իսկ հետո ասաց.

— Նիկ… Նիկ: Խնդրում եմ, մի տանջիր ինձ:

Քրենդոլը նստեց առաջին իսկ պատահած աթոռին:

— Ի՞նչ:

Պոլլին լաց եղավ:

— Ախ, Նիկ: Մի արա: Այդքան դաժան մի՛ եղիր: Ես գիտեմ, թե դու ինչի քեզ դատապարտեցիր յոթ տարվա արքսորի: Հենց որ այսօր լսեցի քո ազգանունը, իսկույն ամեն ինչ հասկացա: Բայց, Նիկ, հասկացիր, նրանից բացի ոչ ոք չի եղել, միայն նա է եղել, միայն նա:

— Միայն նա՞… ի՞նչ է նա…

— Ես քեզ դավաճանել եմ միայն նրա հետ: Ու ես կարծում էի, թե նա սիրում է ինձ, Նիկ: Ես չէի բաժանվի քեզնից, եթե իմանայի, թե նա ինչպիսին է: Բայց չէ որ դու էլ դա գիտես, Նիկ: Գիտես, որքան ինձ ստիպեց տառապել: Ես արդեն պատժված եմ, Նիկ, մի սպանիր ինձ, խնդրում եմ, Նիկ, մի սպանիր:

— Լսիր, Պոլլի,— ասաց ապշած Նիկը,— Պոլլի, պստիկս, աստծո սիրու…

— Նիկ,— հիստերիկ հեծկլտում էր նա:— Նիկ, չէ որ այդ ժամանակից տասնմեկ տարի է անցել: Համենայն դեպս, տասը: Դրա համար ինձ մի սպանիր, Նիկ, խնդրում եմ, մի սպանիր, ազնիվ խոսք, ես միայն մեկ տարի եմ անհավատարիմ եղել քեզ: Դե մանաշատը՝ երկու տարի: Ազնիվ խոսք, Նիկ: Եվ միայն նրա հետ: Մյուսները հաշիվ չեն: Դրանք եղել են… թռուցիկ հաճույքներ: Դրանցից ոչինչ չէր փոխվում, Նիկ: Միայն թե ինձ չսպանես, Նիկ: Միայն թե ինձ չսպանես, Նիկ: Չսպանես ինձ,— եւ, ձեռքով ծածկելով դեմքը, նա ցնցվեց հծկլտանքից:

Քրենդոլը մի քանի վայրկյան նայում էր նրան, հետո լիզեց չորացած շրթունքները: Հետո սուլեց եւ անջատեց հեռուստացույցը: Հետո ետ ընկավ աթոռի թիկնակին ու նորից սուլեց, բայց այս անգամ սեղմած ատամների արանքից, այնպես, որ ոչ թե սուլոց ստացվեց, այլ ֆշշոց:

Պոլլի: Պոլլին իրեն դավաճանել է: Մեկ տարի… ոչ երկու տարի: Եվ… ինչպես նա ասա՞ց, մնացածնե՞րը: Մնացածները եղել են միայն թռուցիկ հաճույքներ…

Միակ կինը, որին ինքը սիրել է եւ, կարծես, երբեք էլ չի դադարել սիրել, այն կինը, որից բաժանվեց անսահման ցավով, ամեն ինչում մեղադրելով միայն իրեն, երբ կինն ասաց, թե ֆիրմայի գործերը նրան խլել են իրենից, բայց քանի որ անազնվություն կլիներ խնդրելը, որ նա հանուն իրեն հրաժարվի այդքան անհրաժեշտ գործից…

Հրա՛շք Պոլլին: Պստլի՛կ Պոլլին: Քանի դեռ նրանք միասին էին, ինքը ոչ մի անգամ նույնիսկ չէր նայել ուրիշ կնոջ վրա: Իսկ եթե որեւէ մեկը հանդգներ ասել… կամ եթե ակնարկեր, ապա ինքը այդ լկտիի գլուխը կջարդեր: Ինքը Պոլլիից բաժանվեց միայն այն պատճառով, որ Պոլլին խնդրեց իրեն այդ անել, բայց միշտ ներքուստ հույս ուներ, որ եթե ֆիրմայի վիճակը ամրապնդվի եւ աշխատանքի հիմնական մասն ընկնի Իրվի ուսերին, որը վարում էր հաշվապահությունը, ինքն ու Պոլլին նորից կգտնեն իրար: Բայց գործերն ավելի վատացան, Իրվի կինը ծանր հիվանդացավ, Իրվը ավելի ուշ-ուշ սկսեց երեւալ գրասենյակում եւ…

— Ես այնպես եմ զգում,— բարձր փնթփնթաց նա,— կարծես հենց նոր եմ իմանում, որ բարի կախարդներ չեն լինում: Որ Պոլլին… Այդ բոլոր գեղեցիկ տարիներին… մեկ մարդ: Իսկ մնացածները՝ սոսկ թռուցիկ հաճույքներ:

Նորից առկայծեց հեռուստացույցի ազդանշանը:

— Ո՞վ է,— բարկացած փնչացրեց Քրենդոլը:

— Միսթր Էդվարդ Բոլլասկը:

— Ի՞նչ է ուզում: (Որ Պոլլին, հրաշք Պոլլին…)

Էկրանի վրա հայտնվեց չափազանց գեր մի մարդու պատկեր: Նա զգուշորեն զննեց համարը:

— Ես ձեզ պիտի հարցնեմ, միսթր Քրենդոլ, արդյոք դուք համոզված եք, որ ձեր հեռուստացույցը գաղտնի չի լսվում:

— Դուք ի՞նչ եք ուզում:

Քրենդոլը գրեթե ափսոսում էր, որ գիրուկը անձամբ չէր եկել իր մոտ: Ինչ հաճույքով հիմա նա կջարդեր որեւէ մեկին:

Միսթր Էդվարդ Բոլլսկը նախատինքով օրորեց գլուխը, եւ նրա այտերը կախքվեցին-հասան ծնոտի տակ:

— Ինչ արած, սըր, եթե դուք չեք երաշխավորում դա, ես ստիպված պիտի լինեմ ռիսկի դիմել: Ես ձեզ դիմում եմ, միսթր Քրենդոլ, կոչ անելով ներել ձեր թշնամիներին, մյուս այտն էլ դեմ անել ձեզ ապտակած ձեռքին: Ես դիմում եմ ձեզ՝ բացեք ձեր սիրտը հավատի, հույսի եւ գթասրտության առաջ, եւ ամենակարեւորը՝ գթասրտության, որ վեր է բոլոր առաքինություններից: Այլ կերպ ասած, սըր, մոռացեք այն մարդու կամ կնոջ հանդեպ ձեր ատելությունը, որին մտադիր եք սպանել, հասկացեք նրա հոգեկան թուլությունը, որ նրան դրդեց անելու այն, ինչ արել է, եւ ներեցեք նրան:

— Ինչո՞ւ պիտի ներեմ,— կատաղած հարցրեց Քրենդոլը:

— Որովհետեւ այդպիսով դուք կարժանանաք բարի բախտի, սըր, ես նկատի ունեմ ոչ միայն բարոյական բարօրությունները, չնայած չպետք է մոռանալ եւ հոգեւոր արժեքների մասին, այլեւ նյութական բարօրությունը: Նյութական, միսթր Քրենդոլ:

— Բարի եղեք, բացատրել, թե ինչի մասին եք խոսում:

Գիրուկը առաջ թեքվեց եւ գողունի ժպտաց:

— Եթե դուք ներեք նրան, ով ձեզ ստիպեց յոթ տարի զրկանքներ ու տառապանքներ կրել, միսթր Քրենդոլ, ես պատրաստ եմ չափազանց շահավետ գործարք առաջարկել ձեզ: Դուք ունեք մեկ սպանություն գործելու իրավունք: Ես մեկ սպանության կարիք ունեմ, ես շատ հարուստ եմ: Իսկ դուք, որքանով կարող եմ դատել (սըր, սխալ չհասկանաք ինձ), շատ աղքատ եք: Ես կարող եմ ապահովել ձեզ մինչեւ ձեր կյանքի վերջին օրերը, եւ ոչ միայն պարզապես ապահովել, միսթր Քրենդոլ, եթե միայն դուք հրաժարվեք ձեր մտադրությունից, ձեր անարժան մտադրությունիից, հաղթեք ձեր մեջ չարին, հրաժարվեք անձնական վրեժխնդրությունից: Դե, ուրեմն, ես ունեմ մի մրցակից, որը…

Ինքդ նստիր քո յոթ տարին,— թունոտ խորհուրդ տվեց նա խավարած էկրանին: Եվ հանկարծ ծիծաղը եկավ: Նա ընկավ աթոռի թիկնակին ու քրքջաց:

Օ՛, ճարպոտ խոզ: Ուզում էր իրեն խեղճացնել ավետարանի տեքստերով:

Սակայն այդ զանգը նաեւ օգուտ տվեց նրան: Այժմ նա տեսավ իր ու Պոլլիի խոսակցության ծիծաղելի կողմը: Ապա մի մտածի՛. նա նստած է իր խղճուկ սենյակում եւ վախից դողում է տասը տարվա վաղեմություն ունեցող կեղտոտ ինտրիգի համար: Ապա մի մտածի, նա երեւակայում է, թե ինքը այդ յոթ տարիները դժոխքում անց է կարցել իր նման…

Քրենդոլը լրիվ պատկերացրեց այդ բոլորը եւ թոթվեց ուսերը:

— Է՛հ, թող դողա: Դա միայն օգուտ կտա նրան:

Ու հանկարծ զգաց, որ շատ քաղցած է:

Նա ուզում էր պատվիրել, որ ճաշը բերեն համար, զգուշանալով ստեֆանսոնյան գունդ նետողների հետ նորից հանդիպումից, բայց հետո միտքը փոխեց: Եթե Ստեֆանսոնը լրջորեն հետապնդում է իրեն, ապա ավելի հեշտ բան չկա, քան իր ճաշի մեջ ինչ-որ բան լցնել տալը: Շատ ավելի անվտանգ կլինի մի որեւէ պատահական ռեստորանում ճաշելը:

Բայց այդ, հաճելի կլինի նստել վառ լուսավորված սրահում, երաժշտություն լսել, մի քիչ թարմանալ: Չէ որ ազատության մեջ սա իր առաջին երեկոն է եւ հարկավոր է ինչ-որ կերպ ազատվել բերանի այն դառն համից, որ մնաց Պոլլիի խոսելուց հետո:

Դռնից դուրս գալուց առաջ նա ուշադիր զննեց միջանցքը: Ոչ մի կասկածելի բան: Բայց նա հիշեց Վեգայի մոտի պստլիկ մոլորակը, որտեղ իրենք ամեն անգամ այ այսպես չորս կողմը նայելով անցնում էին զուգահեռ աճած բարձր ձիաձետներից կազմված թունելներով: Իսկ եթե եչալուրջ չլինեին… անզգույշներին երբեմն ճանկում էր տզրուկանման վիթխարի կաղկամորթը, որը իր խեցու կտորները կարողանում էր մեծ ուժով հեռու նետել: Խեցու բեկորը շշմեցնում էր զոհին, իսկ այդ ընթացքում ազրուկը հասցնում էր մոտենալ նրան: Եվ այդ տզրկուկը կարող էրծ տասը րոպեի ընթացքում լրիվ ծծել մարդու արյունը:

Մի անգամ այդպիսի խեցու կտորն ընկավ իր վրա, բայց մինչ ինքը ուշագնաց ընկած էր, Հենքը… Ծերուկ Օտտո-Բլոտտոն…

Քրենդոլը ժպտաց: Միթե այդպիսի օր կլինի, երբ իրենք կարոտով կհիշեն կրած սարսափները: Այդպես երբեմն հին զինվորներն են հիշում պատերազմի նույնիսկ ամենածանր փորությունները: Էհ, ինչ արած, ինքն այդ սարսափները կրել է ոչ այն բանի համար, որ միսթր Էդվարդ Բոլլասկի նման կեցծ բարեպաշտները ուրիշի ձերքով անպատիժ սպանեն իրենց թշնամիներին:

Եվ եթե կուզեք, ոչ էլ Պոլլիի նման ստոր ու վախկոտ պոռնիկների համար:

«Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոն: Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆենսոն…»

Ինչ-որ մեկը ձեռքը դրեց նրա ուսին եւ, սթափվելով, նա տեսավ, որ միջանցքի կեսն արդեն անցել է:

— Նիկ:

Քրենդոլը շրջվեց: Սեպաձեւ կտրած մորուք. նա այդպիսի մորուքով ծանոթ չուներ, բայց աչքերը զարմանալիորեն ծանոթ էին…

— Նիկ,— ասաց մորուքավոր մարդը,— ես չկարողացա:

Այդ աչքերը… Դե, իհարկե, սա իր կրտսեր եղբայրն է:

— Դե՛ն,— բացականչեց նա:

— Այո, ես եմ: Ահա՛:

Ինչ-որ բան աղմոկկով ընկավ հատակին: Քրենդոլը ցած նայեց եւ գորգի վրա տեսավ բլաստեր՝ մեծ կալիբրի եւ ավելի թանկ, քան իր բլաստերն էր: «Ինչո՞ւ է Դենը ատրճանակ պահում մոտը: Նրան ո՞վ է հետեւում»:

Այդ միտքը մի աղոտ կռահում բերեց իր հետ: Եվ սոսկումը, սոսկումն այն բանից, որ կարող էր ասել եղբայրը, որին չէր տեսել այդքա՛ն երկար տարիներ:

— Ես կարող էի քեզ սպանել, հենց որ դու մտար միջանցք,— ասում էր Դենը:— Ես անընդհատ քեզ պահում էի նշանառության տակ: Բայց ես ուզում եմ դու իմանաս, որ ձգանը չսեղմեցի ոչ այն պատճառով, որ պետք է դատապարտվեմ գործածս սպանության համար:

— Հա՞,— դանդաղ ասաց Քրենդոլը, նորից վերապրելով իր ողջ անցյալը:— Ես ուղղակի չդիմացա այն մտքին, որ էլ ավելի մեղավոր պիտի լինեմ քո առաջ: Պոլլիի հետ այդ պատմությունից հետու ես միշտ…

— Պոլլիի՞: Ախ, հա, իհարկե, Պոլլիի հետ:— Թվում էր, թե նրա կզակից կշռաքար են կախել, որը գլուխը կռացնում եւ խանգարում էր բերանը փակելուն:— Պոլլիի հետ…

Դենը երկու անգամ բռունքցով խփեց ափին:

— Ես գիտեմ, որ դու վաղ թե ուշ հաշիվ կպահանջես ինձանից: Ես քիչ մնաց խելագարվեի սպասելուց, եւ խղճի խայթից: Բայց ես չէի կարծում, որ դու այդպիսի ճանապարհ կընտրես, Նիկ: Յոթ տարի սպասել:

— Դրա համա՞ր դու ինձ չէիր գրում, Դեն:

— Իսկ ես ի՞նչ կարող էի գրել: Եվ հիմա էլ ի՞նչ կարող եմ ասել: Ինձ թվում էր, թե սիրում եմ նրան, բայց ամեն ինչ վերջացավ, հենց որ դուք բաժանվեցիք: Երեւի, ես միշտ ձգտել եմ

տիրանալ այն ամենին, ինչ քոնն է եղել, Նիկ, որովհետեւ դու իմ ավագ եղբայրն ես: Ուրիշ արդարացում ես չունեմ, ու հրաշալի գիտեմ, որթե ինչ արժի արդարանալս: Չէ որ գիտեմ, թե դու ու Պոլլին ոնց էիք իրար հետ, եւ ես այդ բոլորն ավերեցի ուղղակի քեզ վատություն անելու ցանկությունից: Բայց այ հիմա, Նիկ, ես քեզ չեմ սպանի , եւ ոչ էլ կպաշտպանվեմ: Ես շատ եմ հոգնել: Եվ շատ եմ մեղավոր: Դու գիտես, թե որտեղ կարող ես ինձ գտնել, Նիկ: Արի, երբ կուզենաս:

Դենը ետ դարձավ ու արագ քայլեց դեպի դուռը: Նրա սրունքների մետաղե զարդերը (մոդայի վերջին ճիչը) փայլփլում էին եւ շողշողում: Նա ես չնայեց, նույնիսկ երբ անցնում էր նախասրահի թափանցիկ պատի ետեւից:

Քրենդոլը երկար նայեց նրա հետեւից, ապա տխուր «հըմ» փնչացրեց, հատակից վերցրեց երկրորդ բլաստերը եւ գնաց ռեստորան փնտրելու:

Նա նստել էր, ցրված քչփորելով բարկահամ դելիկատեսները, որ բրեված էին Վեներայից եւ բնավ էլ այնքան համեղ չէին, ինչպես նա պատկերացնում էր իր հիշողություններում, եւ մտածում էր Պոլլիի ու Դենի մասին: Այժմ, երբ նա գիտեր ամեն ինչ- հիշողության մեջ հառնում էին հազար ու մի մանրուքներ: Իսկ ինքը բոլորովին չէր կասկածում… Բայց ո՞վ կարող էր կասկածել Պոլլիին: Ո՞վ կարող էր չհավատալ Դենին:

Քրենդոլը գրպանից հանեց իր ազատման վկայականը եւ սկսեց ուշադրությամբ ուսումնասիրել. «Լրիվ կրելով նախնական հաշվարկով առավելագույն բանտային կալանքի յոթամյա պատիժը, Նիկլաս Քրենդոլն ազատվում է կանխահանցագործի բոլոր իրավունքներով…»

… որպեսզի սպանի՞ իր նախկին կին Պոլլի Քրենդոլին:

… որպեսզի սպանի՞ իր կրտսեր եղբայր Դենիալ Քրենդոլին:

Ինչպիսի՛ անհեթեթություն:

Բայց դա նրանց բոլորովին էլ անհեթեթություն չթվաց: Նրանք երկուսն էլ այնպես երանելիորեն համոզված էին իրենց գործած հանցանքի մեջ, այնպես ինքնագոհ միայն իրենց եւ միմիայն իրենց էին համարում ատելության միակ օբյեկտը, այնպիսի դաժան ատելության, որ վրեժխնդրության տենչը չնահանջեց նույնիսկ այն ամենաահավորի առջեւ, ինչ ուներ Գլակտիկան. նրանք երկուսն էլ այնպես համոզված էին դրանում, որ բազմիցս հեջողված ու փորձված նրանց խորամանկությունը դավաճանեց իրենց եւ ճիշտ չհասկացան Քրենդոլի աչքերում արտահայտված ուրախությունը: Ե՛վ Պոլլին, եւ՛ Դենը շատ հեշտությամբ կարող էին ընդհատել արդեն սկսած խոստովանությունը, ու ինքը ոչ մի բան էլ գլխի չէր ընկնի: Եթե միայն նրանք այդքան տարված չլինեին իրենցով ու ժամանակին նկատեին Քրենդոլի զարմանքը, կարող էին հետագայում էլ խաբել նրան: Եթե ոչ երկուսին, ապա նրանցից մեկնումեկին անպայման կհաջողվեր դա:

Քրենդոլն աչքի ծայրով նկատեց, որ իր սեղանի մոտ կին է կանգնած: Թեթեւակի կռանալով, նա Քրենդոլի ուսի վրայից կարդում էր վկայականը: Նիկը ետ ընկավ աթոռի թիկնակին եւ ոտից-գլուխ նայեց կնոջը, ու կինը ժպտաց նրան:

Անծանոթ կինը հեքիաթային գեղեցկուհի էր: Նա օժտված էր ոչ միայն այն ամենով, ինչը գեղեցիկ է դարձնում կնոջը՝ իդեալական մարմին, դեմք, կեցվածք, մազեր, մաշկ եւ աչքեր, այլեւ դրանց ավելանում էին նաեւ այն ավարտուն գծերը, որոնք, ինչպես արվեստի բոլոր

տեսակների մեջ, գլուխգործոցթ զանազանում են սովորական հրաշալի ստեղծագործությունից: Այդ գծերից մեկը, իհարկե, հարստությունն էր, որ արտահայտվում էր սանրվածքի եւ զգեստի մեջ՝ ըստ արժանվույն բոլորելով նման գեղեցկությունը, ինչպես նաեւ միակ պրաեայով՝ Սատուրնից բերված անգին քարով, որը սեւ բոցի պես հորհորում էր նրա կրծքին: Բայց այդ գծերին կարելի էր ավելացնել նաեւ աչքերում փայլփլող խելքը եւ ազնվազարմությունը, որ գեղանիորեն լրացնում էր միս ու արյունից արարված այս սքանչելիքը:

— Դուք ինձ թո՞ւյլ կտաք նստել ձեզ հետ, միսթր Քրենդոլ,— հարցրեց նա մի այնպիսի ձայնով, որի համար բավական կլինի ասել, թե լրիվ ներդաշնակում էր կնոջ ողջ կերպարանքի հետ:

Այս խնդրանքը զվարճացրեց Քրենդոլին, բայց եւ աշխույժ հուզմունք հաղորդեց: Նա մի կողմ քաշվեց, եւ անծանոթուհին նստեց նրա կոպիտ բազմոց վրա կայսրուհու պես, որը մազմու է գահին հարկատու արքաների հայացքների ներքո:

Քրենդոլը մոտավորապես գլխի էր ընկնում, թե նա ով է եւ ինչ է փնտրում: Դա կարող էր լինել կամ բարձրաշխարհիկ երիտասարդ գիշատչուհի, կամ էլ կինոաստղ, որ վերջերս է հռչակվել եւ դեռեւս պահպանում է Նորի ստատուսը:

Իսկ ինքը, հենց նոր ազատված տաժանակիրը, որն ունի կյանքի եւ մահվան իրավունք, մի այնպիսի արտառոց նորույթ էր, որ նա անպայման կցանկանար փորձել:

Իհարկե, իր նկատմամբ նման հետաքրքրությունը այնքան էլ շոյիչ չէր, բայց, մյուս կողմից, սովորական պարագաներում հասարակ մահկանացուն երազել անգամ չի կարող նման կնոջ հետ հանդիպելու մասին, ուրեմն էլ ինչու ինքը օգուտ չքաղի իր վիճակից: Ինքը կբավարարի այդ կնոջ քմահաճույքը, իսկ նա ազատության մեջ իր առաջին երեկոն…

— Սա ձեր ազատման վկայակա՞նն է,— հարցրեց կինը եւ մեկ անգամ էլ կարդաց: Նրա վերին շրթունքը մի քիչ խոնավացավ, եւ Քրենդոլը զարմացավ, հոգնած գերհագեցածության այդ նշանը տեսնելով հաղթական դեռատիության եւ գեղեկցության այս կենդանի մարմնավորման մոտ:

— Ասացեք, միսթր Քրենդոլ,— վերջապես խոսեց անծանոթ կինը ու դեմքով շրջվեց Քրենդոլի կողմը:— Նրա վերին շրթունքի վրայի քրտինքի կաթիլները ավելի ցայտուն փայլփլեցին:— Ասացեք, դուք դատապարտված եք եղել որպես կանխահանցագո՞րծ: Բայց ճիշտ է, չէ՞, որ մարդասպանության համար նախատեսված պատիժը եւ ամենազազանային բռնաբարության համար նախատեսված պատիժը նույնն են:

Երկար լռությունից հետո Քրենդոլը մատուցողուհուց պահանջեց հաշիվը եւ դուրս եկավ ռեստորանից:

Երբ նա մոտեցավ իր հյուրանոցին, արդեն այնքան հանգիստ էր, որ չմոռացավ ուշադիր զննել թափանցիկ պատի հետեւի նախասրահը: Ստեֆանսոնյաի վարձկանի նմանվող մարդ չկար: Ի դեպ, Ստեֆանսոնը զգույշ խաղացող է եւ անհաջողություն կրելուց հետո չի շտապի կատարել հաջորդ փորձը:

Բայց այդ կինը: Եվ միսթր Էդվարդ Բոլլաքը…

Նրա փոստարկղում երկտող կար: Ինչ-որ մեկը զանգահարել էր եւ թողել իր հեռախոսի համար, բայց ուրիշ բան չէր խնդրել հայտնել:

Բարձրանալով իր համարը, Քրենդոլը մտածում էր, թե էլ ում ինքը կարող է պետք գալ: Գուցե, Ստեֆանսոնը որոշել է հաշտության համար խաղ նախապատրաստել: Կամ էլ մի որեւծ դժբախտ մայր կխնդրի, որ ինքը սպանի նրա անբուժելի հիվանդ երեխային:

Նա ասաց համարը եւ հետաքրքրությամբ նայեց էկրանին: Էկրանը առկայծեց, ու նրա վրա մի դեմք հայտնվեց: Քրենդոլը հազիվ զսպեց խանդավառ ճիչը: Չէ, ինքն, այնուամենայնիվ, մի բարեկամ ունի Նյու Յորքում: Ծերուկ Իրվը, միշտ ողջամիտ ու հուսալի Իրվը: Իր նախկին գործընկերը: Բայց հենց այն պահին, երբ Քրենդոլն արդեն ուզում էր բարձրաձայն արտահայտել իր ուրախությունը, հանկարծ կծեց լեզուն: Այդ օրը չափից դուրս շատ անակնկալներ էր բերել: Իսկ Իրվի դեմքի արտահայտության մեջ ինչ-որ բան կար…

— Լսիր, Նիկ,— մռայլ սկսեց Իրվը տհաճ դադարից հետո:— Ես հիմա կուզեի միայն մեկ հարց տալ քեզ:

— Իսկ ի՞նչ հարց, Իրվ:

— Դու վաղո՞ւց գիտեիր: Երբ գլխի ընկա՞ր:

Քրենդոլը լուռ մտածեց մի քանի հնարավոր պատասխանները եւ ընտրեց, վերջապես, առավել հարմարը:

— Շատ վաղուց, Իրվ: Բայց չէ որ այն ժամանակ ես ոչինչ չէի կարող անել:

Իրվը գլխով արեց:

— Ես այդպես էլ գիտեի: Դե, ուրեմն, լսիր: Ես չեմ ուզում քեզ աղաչել ու արդարանալ: Այս յոթ տարիների ընթացքում դու այնքան տառապանք ես կրել, որ իմ արդարանալը ոչինչ չի փոխի: Բայց միայն մի բանի հավատա, ես սկսեցի գանձարկղից շատ վերցնել միայն կնոջս հիվանդանալուց հետո: Իմ սեփական միջոցները սպառվել էին: Ես այլեւս չէի կարող պարտք անել, իսկ դու էլ քո սեփական ընտանեկան անախորժություններն ունեիր: Իսկ երբ ֆիրմայի գործերը սկսեցին լավանալ, ես վախեցա, որ նակին թվերի եւ նոր թվերի միջեւ եղած չափից դուրս մեծ անհամապատասխանությունը կբացի քո աչքերը: Դրա համար էլ սկսեցի յուրացնել շահույթը արդեն ոչ թե հիվանդանոցի հաշիվները վճարելու համար, եւ ոչ էլ քեզ խաբելու համար, Նիկ, հավատա ինձ, այլ ուղղակի, որ չիմանաս, թե ինչքան եմ յուրացրել: Երբ դու եկար ինձ մոտ եւ ասացիր, որ լրիվ ընկճվել ես եւ ուզում ես դուրս գալ ֆիրմայից… Դե, չեմ վիճում, ես այն ժամանակ ստորաբար վարվեցի: Ես պետք է ճշմարտությունն ասեի քեզ: Բայց, մյուս կողմից, որպես գործընկերներ, մենք այնքան էլ համապատասխան չէինք, իսկ այժմ ինձ առիթ էր ներկայանում դառնալ ֆիրմայի տեր, երբ արդեն նրա դրությունը բարելավվել էր, եւ ես…

Ու դու գնեցիր իմ բաժինը երեք հարյուր քսան դոլարով,— նրա փոխարեն վերջացրեց Քրենդոլը:— Իսկ այժմ որքա՞ն արժե ֆիրման, Իրվ:

Իրվը հայացքը ուրիշ կողմ թեքեց:

Մոտավորապես միլիոն: Բայց, Նիկ, լսիր: Անցյալ տարի մեծավաճառ առեւտրակը չտեսնված ծաղկում ապրեց: Այնպես որ քո բաժինն այստեղ արդեն չկա: Լսիր, Նիկ:

Իրվը մաքուր անձեռոցիկ վերցրեց եւ սրբեց քրտնած ճակատը:

— Նիկ,— ասաց նա, թեքվելով առաջ եւ ուժ գործադրելով, որ ժպտա:— Լսիր ինձ, Նիկ: Մոռացիր այդ մասին, մի հետապնդիր ինձ, ու ես որոշ բան կառաջարկեմ քեզ, Ինձ պետք է մի կառավարիչ, քո տեխնիկական գիտելիքներով: Ես քեզ կտամ գործի քսան տոկոսը, Նիկ… Ոչ, քսանհինգ: Ես պատրաստ եմ տալու նույնիսկ երեսուն… երեսունհինգ:

— Ու կարծում ես, որ դրանով կհատուցես տաժանակրության յոթ տարին:

Իրվը աղերբանքով բարձրացրեց դողդողացող ձեռքերը:

— Ոչ, Նիկ, իհարկե ոչ: Դրանք ոչ մի բանով չի կարելի փոխհատուցել: Բայց լսիր, Նիկ: Ես քեռասունհինգ տոկ…

Քրենդոլն անջատեց հեռուստացույցը: Որոշ ժամանակ Նիկը շարունակում էր նստած մնալ, հետո վեր թռավ տեղից ու ետ ու առաջ քայլեց սենյակում: Նա կանգ առավ եւ նայեցի իր բլաստերներին՝ առավոտյան գնածը եւ Դենի գցածը: Հանեց ազատման վկայականը եւ ուշադիր կարդաց: Հետո նորից դրեց գրպանը:

Զանգահարելով հերթապահին, պատվիրեց միջցամաքային խոսակցություն:

— Լավ, սըր: Բայց մի ջենթլմեն է ուզում ձեզ տեսնել: Միսթր Օտտո Հենքը, սըր:

Մի քանի րոպե հետո նրա համարը մտավ Օտտո-Բլոտտոն: Նա հարբած էր, բայց, ինչպես միշտ նման դեպքերում, արտաքուստ դա բոլորովին չէր երեւում:

— Ի՞նչ ես կարծում, Նիկ, ի՛նչ ես կարծում, գրողը տանի…

— Սրս,— ընդհատեց նրան Քրելդոլը:— Ինձ միացրին:

Հիմալայան լեռների ինչ-որ տեղից հեռախոսավարուհին ասաց.

— Խոսեք, Նյու Յորք:

Ու էկրանի վրա հայտնվեց Ֆրեդերիկ Ստոդարդ Ստեֆանսոնը: Նա ավելի շատ էր ծերացել, քան այդ օրը Քրենդոլի տեսած բոլոր մյուսները: Այսինքն, դա դեռ ոչ մի բան չէր նշանակում, երբ Ստեֆանսոնը բարդ գործողություն էր մշակում, նա միշտ ծերացած էր թվում:

Ստեֆանսոնը ոչինչ չասաց: Նա միայն նայում էր Քրենդոլին, ատամներն ամուր սեղմած: Նրա հետեւում երեւում էր որսորդական տնակի դահլիճը՝ ճիշտ եւ ճիշտ այնպիսին, ինչպես նման դահլիճները հաճախ պատկերվում են հեռուստատեսային ռեժիսորների երեւակայության մեջ:

— Դե լավ, Ֆրեդի,— առաջինը խոսեց Քրենդոլը:— Ես քեզ շատ չեմ զբաղեցնի:— Կարող ես ետ կանչել քո շներին ու էլ չփորձես սպանել կամ հաշմել ինձ: Ես այլեւս բարկացած չեմ քեզ վրա:

Նույնիսկ բարկացած չես…— Ստեֆանսոնը դժվարությամբ վերստացավ սովորական երկաթե ինքնատիրապետումը:— Իսկ ինչո՞ւ:

— Որովհետեւ… դե, որովհետեւ պատճառները շատ են: Որովհետեւ հիմա, երբ ինձ մնում է միայն սպանել քեզ, քո մահն ինձ չի պատճառի դժոխային ուրախության յոթ տարիներ: Եվ այն պատճառով, որ դու ինձ մի այնպիսի բան չես արել, որ արած չլինեն մյուս բոլորը՝ ինչ կարողացել են եւ, հավանաբար, լույս աշխարհ գալու օրից սկսած: Ըստ

երեւույթին, ես ապուշ եմ ծննդյանս օրից: Այդպես եմ ստեղծված: Ու դու պարզապես օգտվել ես դրանից:

Ստեֆանսոնը առաջ թեքվեց, ուշադիր հայացքը սեւեռեց նրա դեմքին, հետո շունչ քաշեց եւ թեթեւացած ձեռքերը խաչեց կրծքին:

— Երեւում է, դու անկեղծ ես խոսում:

— Իհարկե, անկեղծ եմ խոսում: Տեսնո՞ւմ ես, — նա ցույց տվեց երկու բլաստերները:— Այսօր ես դեն կնետեմ սրանք: Այսօրվանից էլ ոչ մի զենք չեմ պահի մոտս: Ես չեմ ուզում, որ որեւէ մեկի կյանքը կախված լինի ինձանից:

Ստեֆանսոնը մտախոհ քչփորում էր բութ մատի եղունգի տակը:

— Ահա թե ինչ,— ասաց նա:— Եթե դու լուրջ ես խոսում, իսկ ըստ իս, այդպես էլ կա, ապա մենք մի բան կմտածենք: Օրինակ, շահույթի որոշ բաժինը կվճարենք քեզ: Հետո կտեսնենք:

— Չնայած դա քեզ ոչ մի օգուտ չի բերի՞,— զարմացած հարցրեց Քրենդոլը:— Իսկ դու ինչի չէիր դա շուտ առաջարկում:

— Որովհետեւ չեմ սիրում, որ ինձ ստիպեն: Մինչ հիմա ես ուժի դեմ ուժ էի բանեցնում:

Քրենդոլը ծանրութեթեւ արեց այդ պատասխանը:

— Չեմ հասկանում: Բայց, գուցե, դու այդպես ես ստեղծված, թող քո ասածը լինի՝ հետո կտեսնենք:

Երբ նա վերջապես շրջվեց Հենքի կողմը, Օտտո-Բլոտտոն դեռ շարունակում էր շփոթված օրորել գլուխը, մտածելով իր սեփական անհաջողության մասին:

— Պատկերացնում ես, Նիկ: Մեկ ամիս առաջ Էլզան զվարճալի ուղեւորության է մեկնել Լուսին: Նրա զգեստի թթվածնի խողովակը փչացել է, եւ նա շնչահեղձ է եղել, մինչեւ կհասցնեին օգնել նրան: Գրողը տանի, Նիկ, հը՞: Իմ ազատվելուց մեկ ամիս առաջ: Չէր կարող մի քոսոտ ամիս սպասել: Նա հռհռում էր իմ վրա, երբ մահանում էր: Սա՝ հաստատ:

Քրենդոլը գրկեց նրա ուսերը:

— Գնանք զբոսնելու, Օտտո-Բլոտտո: Հավանալը երկուսիս էլ օգուտ կտա:

«Տարօրինակ է, թե սպանելու իրավունքն ինչպես է ազդում մարդկանց վրա,— մտածում էր նա:— Պոլլին վարվեց իր ձեւոր, իսկ Դենը՝ իր: Ծերուկ Իրվը հուսահատորեն կյանք էր աղերսում եւ աշխատում էր հանկարծ շատ չվճարել: Միսթր Էդվարվ Բոլլասկը եւ ռեստորան աղջիկը… Եվ միայն Ֆրեդի Ստեֆանսոնը, միակ նախատեսված զոհը, միայն նա չցանկացավ խնդրել»:

Խնդրել չկամեցավ, բայց ողորմաց շռայլորեն: Կարո՞ղ է ինքն ընդունել Ստեֆանսոնից այն, ինչը, ըստ էության, ողորմություն կլինի: Քրենդոլը թոթվեց ուսերը: Ո՛վ գտիտգ, թե ինչի է ընդունակ ինքը կամ մեկ ուրիշը:

— Ի՞նչ պիտի անենք հիմա, Նիկ,— նեղացած հարցրեց Օտտո-Բլոտտոն, երբ նրանք դուրս եկան հյուրանոցից:— Չէ՛, դու ինձ պատասխանի, ի՞նչ պիտի անենք:

— Ես, համենայն դեպս, այ թե ի՛նչ կանեմ,— պատասխանեց Քրենդոլը, ամեն մի ձեռքով մի բլաստեր վերցնելով։— Միայն սա, եւ այլեւս ոչինչ։— Նա իրար հետեւից փայլփլուն բլաստերները շպրտեց «Այծեղջյուր-Ռիտց»-ի շքեղ նախասրահի ապակե դռանը։ Լսվեց շրխկոց, հետո նորից շրխոց։ Պատը փլվեց, փշրվելով երկար եւ կեր թրի նման։ Նախասրահում եղած մարդիկ աչքերը չռած նայում էին իրենց շուրջը։

Վազելով Քրենդոլին մոտեցավ ոստիկանը։ Նրա մետաղյա համազգեստի վահանակը զնգզնգում էր։

— Ե՛ս տեսա։ Ես տեսա՛, թե դու ինչ արեցիր,— գոռում էր նա, բռնելով Քրենդոլին։— Դու դրա համար երեսուն օր կստանաս։

— Իսկապե՞ս,— ասաց Քրենդոլը։— Երեսուն օ՞ր։— Նա գրպանից հանեց ազատման վկայականը եւ մեկնեց ոստիկանին։

— Այ թե ինչ, հարգելի օրենքի պահապան։ Այս թղթի վրա ծակեք հարկ եղած չափով կամ կտրեք համապատասխան չափի կտրոն։ Կամ մեկը, կամ մյուսը։ Կարող եք նաեւ եւ՛ մեկը, եւ՛ մյուսը։ Ինչպես որ կամենաք։